ՍԻՕՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐՋԱՆ ՄԽԱՄԵԱՑ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1875

ՑՈՒՑԱԿ ԳՐՈՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՒԱԳԵԼԱԿԱՆ ԱԹՈՌԻՑ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՆԻ ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆԵՔ ՆՈՅԻՆ

	Դրամ	Փող.
Ագնէս, Հայկերեկ փոխոց Ի Տաճկերէն Յ. Փիլիքճեանցի. տպեալ 1872.	4	
Ագօնագիքը Աշխատան տեղեաց, աշխարհիկ լեզուաւ.	2	
Ագռաջքը Ի Սկեան, ոչեաց Մ. Թոմիոլ. 1869.	1	20
Ադամքինութեան ճաշման, կամ Մենոռը մանկանց, թարգմանեց Տ. Հ. Թ. Ս.	7	
Աճառեան առենի. Ս. Եկեղեցւոյ մէջ կարգացուելիք աւետարաններն են.	3)	
Աճառեան վարք, Տպեալ 1867.	6	
— Նոյնը կտակարանաւ. Տպեալ 1867.	12	
— Նոյնը ճաշու. Տպեալ. 1868.	30	
Բանախօսութիւն, աշակերտաց հայոց մէջ. Բ. Տիլ 1874.	1	
Բացատրութիւն Հրաժարման եւ զղջման եւ առաւօտեան կրկնոց շնորհալւոյ. (*)	6	
Գաղիկ վերջին արքայ Հայոց Բագրատունի, պղնդրութիւն. Տպ. 1672.	5	
Գործք Առաքելոց, Տպեալ 1867.	6	
Գործք Ոսկեղինիկ Սամուէլ Ոարբել հրեի. Տպեալ 1867.	3	
Գամասանք. Տպեալ 1867.	3	
Եղիշէ, պատմութիւն վարդանանց պատերազմին ընտիր գործ նոսենեաց.	7	
Երեւելի կրից. Տպեալ 1851.	7	
Երկու խօսք, եկեղեցւոյ պաշտօնէից ուղղուած. Տպեալ 1873.	3	
Եփրեմ խուրի, աղօթագիրք, գործ նոսենեաց, Գ. տպագ. 1870.	7	
Ջանազանութիւն հինգ գալուց. Բ. տիլ. 1862.	40	
Ընդհանրական թուղթք Նիւսիոյ Շնորհալւոյ. Տպեալ. 1871.	18	
Թանգարան խրատու. Գ. տիլ 1870:	18	
Թափօրի տետրակ տարեկան, Տպեալ 1839. (*)	3	
— Նոյնը չափաւոր ոսկի. Տպեալ 1838 (*)	2	20
— Նոյնը Ս. Յակոբեայ տանարին մէջ կատարուած թափօրելու համար	4	
Թուաբանութիւն համառօտ, Ս. Պ. Փափազեանցի, Դ տիլ. 1869.	3	
Ժամագիրք խոշորագիր. Տպեալ 1866.	20	
Ժամագիրք տետրի. Տպեալ 1870.	50	
Իմաստ Ս. Տիզեաց եւ նորա պաշտօնական վերաբերութիւնը. Տպեալ 1871. (**)	6	
Խորհրդածութիւն Ս. պատարագի, գործ նոսենեաց. Տպեալ 1842.	10	
Խորհրդատետր Ս. պատարագի. Տպեալ 1873.	10	
Կարգադրութիւն առաջնորդական, Տպեալ 1871.	5	
Կենսագրութիւն Բասքալայ, Տպեալ 1869.	2	
Կտակարիք Հոգեշահ բանից. գրեց Ալրտալ խոճենց. Տպեալ 1853.	6	
Կրկնական Աճառականաց բանից, Գիտ Ա. Սիմեն պետրոս.	1	20
» » » Գիտ Բ. Յակոբոսի.	1	20
» » » Գիտ Գ. Ոգիք Աստուծոյ.	1	20
Հաճատատութիւն երկրատան առաքելոց. Հանդերձ յաւելուածով.	4	
Հաճատութիւն Քրիստոնէական ուսման. Տպեալ 1873.	4	
Հայելի վիպաց. Տպեալ 1852. (**)	6	

ՆԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ամէն տպագրեալ (*) նշան գրքին հաշտագիր ըլլալը կը յայտնէ.
Իսկ երկուքը (**) բերելին տպագիր ըլլալը:



ՅԻՈՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Թիւ 2.

ԱՄԱՍԱԳԻՐ

ՓԵՏՐՎԱՐ 28
1875.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՏՕՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

ԵՒ

ՀԱՆԳԷՍ ԺԱՄԱՆԳԱԿՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սրբոց վարդանանց նահատակութեան Տօնն եկեղեցական փառաւորութեամբ կատարուելէն վերջ կատարեցաւ ապա գոպրոցական հանդէս ժառանգաւորաց վարժարանի Սրբոց Ամուսոյ։ Սոյն հանդիսին ներկայ էին Ս. Ուխտիս Մխիթարեանքն և Ուխտաւորներէն զատ նաեւ քաղաքացի Աղգայինք եւ վաճառ. Բզեզեան Սէթ Պէյ։ Աշակերտաց հայերէն, տաճկերէն եւ գաղղիարէն ճառախօսութիւններէն վերջ վաճառ. Բզեզեան իւր

զոհաբեռնութիւնն յայտնելով համառօտ առաւելախօսութեամբ յորդորեցաւ զոյց ուսումնասիրութեան, և ապա Ս. Պատրիարքն Օամանեան Բարեխնամ Տէրութեան իւր հայրական չնորհաճ կրթութեան և յառաջդիմութեան արժանութիւններն քաջալերելով, օրհնեց Աղգը, Տէրութիւնն, ուսուցիչներն ու ուսանողներն և այսպէս վայելչութեամբ կնքեցաւ հանդէսն։

Այժան կը համարիմք հրատարակել Սիօնի մէջ ալեմ Բզեզեան

տեղեակ ըլլալու համար (հայերէն թարգմանութեամբ հանդերձ) զոր կեա հանդիսին ի դիր առնելով զրկած էր Ս. Պատրիարքին և Թէ աշակերտաց Լու-

---

Ուսում ու մարդիկին դատը ուշ չերեւիլնէ տերէձէ ալ վէ գլխէթէլ օլըրլընը՝ հէր մէղհէպտէ պուլունան խնդիրի էսլաթ փիք չաք քիթապլէր թեկելիքի լէ պէյան ու թաֆխիլ ինձ միշ օլտուգլարընտան, պունը խոպաթ իչնուն զնյատե սէօզ սէօյլէմէյե հաձէթ կէօրնուլէմէզ։ Ամարը սապըգա վէ զէմանըմըզտա կէօրտիւկիւմիզ ահ՝ վալը վաղհա տեղեկէթլէ սապիթ օլսըր, քի ինսանլերի տիւնեա վէ ախրեթտե թարիգի ֆէվզ ու սանատե թէ նյատ խոէն անձագ էնելորը ուսում վէ քեմալ նիշ. իշտե պունլորը թահսիլտե լազըմ օլան էսպապըն էն պաշլուլորը տէ՝ միւսաատէի զէման վէ էմքեան օլսուն՝ զէման նսկ համա օլսուն վեկիլի նյմէթ պիմինէթիմիզ փատիշահըմըզ էֆենտիմիզին զէմանը սապէթինիշանը միւնիքեանէլերիտիր, քի զնյրի ձէնահը սալթանաթը սէնկյէլէրինտե պուլունան քեաֆֆէլի միկել վէ ադամ հիչ պիրի պիրինտեն ֆարգը ոլմայարագ իսմալը ֆէզզայի ինսանլըկ եօլունտա պունձա միւսաֆատաթ վէ ինսայաթը ձեկնէկի չահանկլերինե մալհար վէ միւսթաղրագ օլմագտա տրը. էմքեան տեկյիմիզ տուկի հէր միլլէթին միւստիտ օլտուղու համ, եանի րուէստայի միլլէթին էֆքատա հագգընտա սարֆը մէսայի վէ հիմէմտաթը օլսուն, Իշտե Բէտէրինիզ մագամընտա պուլունան Բաթրիգ Էֆենտի հաղեթլէրի տախի պու եօլտա պիղդաթ վէ րուէստա ձանիպինտեն պիլ վաղըձտա սարֆը մէսայի միւթեվալիյե իմմէքտե օլտուղընը

սեցած ձառերէն մին, յորում Սրբոց վարդանանց նահատակութեան վաեմ նշանակութիւնն բացատրուած է։

Ուսման և գիտութեանց յարգն ու կարեւորութիւնը նր առաքնոյ բարձր եւ մեծագնի լինելն՝ իւրաքանչիւր ազգաց նախնի գրագէտներն անհամար գրքերով ընդարձակօրէն բացատրած են. ուստի այս կէտը երկարօրէն բացատրելու հարկ չը կայ։ Անցեալ եւ ներկայ ժամանակիս շարժմունքն եւ ժողովրդային վիճակն յայտնի ցոյց կուտայ, որ մարդոյ Թէ այս աշխարհիս և Թէ հանդերձեալին մէջ փրկութեան եւ երջանկութեան համներու միակ միջոցն գիտութեան լսելն եւ կատարելութիւնն է, որոնք ձեռք բերելու համար կարեւոր միջոցներուն գլխաւորներն են ժամանակին ազգ-ԲԻՒՆը և ՅեռնհատուԲԻՒՆը։ Ժամանակին ազատութեան նկատմամբ, Փառք Աստուծոյ, որ այնպիսի բարեխընամ Կայսեր օրով կ'ապրինք, որոյ Թագաւորութիւնն արդարատիրութիւն է։ Եւ նորա բարձր հովանաւորութեամբ ներքեւ գտնուած ամեն ազգ և ազինք կը վայելեն անխոտոր անչափ ազատութիւն եւ առանձնաշնորհութիւն, որ մարդկային կատարելութեան շարժառիթներն են։ Իսկ ձեռնհասութիւնը իւրաքանչիւր ազգայ նպաստաւոր վիճակէն եւ նորա մեծամեծայ ջանքէն ու աշխատութենէն կախումն ունի, և ահա ներկայ քննութեան հանդէսն մեծ ապացոյց է այն յարատեւ ճգանց և խնամոյ, զոր Ս. Պատրիարքն, Ձեր Բարեխնամ Հայրն ուղղակի, և Աղգին մեծամեծներն անուղղակի՝ ցնծած են և կը ցնծան, որոց արդիւնքը որ է Ձեր յառաջադիմութիւնն այսօր այն հան-

պու կիւնքի խմիհանելուցուս տիտէի մէմնունիչէլէ կէօրաիւկիվիչ ահվալը թէրադիցյանէրուզէ սապիթ օլմուշ տլը։ Արթըգ պուննան ոճրա տաչի սիզէ լազըմ օլան սայու ղայրչէմաէ դուսուր իմիմէչէրէք իգմալը թահսիլ իչէ՝ Տէօվլէթ վէ Միլլէթ նազարընուա մէմուուհ վէ մէրզուպ օլմագ ֆէղայիլինի իքթիսապ իմիմէլիսինիզ։

դիսիս մէջ գոհունակութեան աչքը տեսայ։

Ուրեմն, ի աշակերտք, դուք եւս կը պարտաւորիք այսուհետեւ յարատեւ աշխատասիրութեամբ ձեզ բերել ձեր կոչման վերաբերեալ ուսմունքները եւ կատարելութիւնը, ըստ կարողանալ օգուտակար հանդիսանալ Տէրութեան եւ Ազգին։

ԱՌԱՓԵԼԱՇՆՈՐՀ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ ԵՒ ՄԵԾԱՐՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Ազգի մը կամ ժողովրդեան մը անցեալ ժամանակի պատմական կեանքը փրկաբեր եւ օգտակար հայելի մ՚է, ուր ներկայ սերունդը մի առ մի կը տեսնէ ինչպէս իւր շքեղ վառաց պանծալի գեղանկարն, նոյնպէս իւր նահատակութիւնը. ինչպէս Հայրենեաց պաշտպան եւ նորա պայծառութեան քանախնդիր անմահ սատարներն, նոյնպէս նորա վառքը նահատնջող ազգադրուժ վատ մատնիչները։ Ա յս նկատմամբ երբ մարդկային ազգի տարեդրութիւնը թղթատենք մեր տեսութենէն ալիսի անցնին խումբ մի հրեշական ուրուականներու սեւագէմ սուսերներ, որք սոսկումն եւ համանգամայն զայրոյթ կը պատճառեն մեզ, եւ հատընտիր քաջաց ականատիպ լուսերեւոյթները, որք մեր միաքն ու հոգին անպատում հիացմամբ կը լուսցանեն։ Ահա գուռդ եւ ամբարտաւան փսերքսէս մի, որ մեծութեան եւ վառաց բարձր կատարչէն մահ, գերութիւն եւ աւերած կը սպառնայ բոլանդակ Յունաստանի, յանգս թերմոպիլեայ քաջն Լէւոնիդաս կրած կատարածէն յետոյ մի ըղկնի միւսոյ ելպուզի պաշտրուս մէջ

՚ի հող կը ծածկէ իւր անթիւ ոսկեզբաստան բանակներն, և ինքն կոր՚ի դլուխ, քամակաբեկ, մազապուր կը զերծանի իրեն սպառնացող գժնդակ մահէն։ Ահա դիւցազնատիպ Գուլիելմոս մը, որ իւր լայնալիճ ազեղամբ անգութ Կրիսլերի սրտին երակը խզզելով՝ կը խորտակէ բռնութեան այն ամենածանր լուծը, որոյ տակ կը հեծէր տառապագին Շվէյտան Հելուետիա։ Բայց ինչ՞ օտար ազգաց պատմական կեանքի մէջ թարթափինք, միթէ քաջերուց անուամբ պարծենալու, մեր ներկայ կենաց զեղծումները բառնալու և մեզ յուսալու ու փայլուն ապագայ մը պատրաստելու համար չունինք մեզ օրինակ քանի՛ քանի Կիւնի և Հայրենեաց նուիրական սեղանի վերայ՚ի զոհ ձեռնձերուղ քաջ նահատակներ և դիւցազուններ։ Թողունք ներկայն, թռչինք, սլանանք յետսակաղաց ընթացիւք ասկից չորեքտասան դար յառաջ, պատկերացնենք մեր երեւակայութեան առջեւ Հայաստանի հինգերորդ դարու ժողովրդական կենաց չքնաղ պատկերն։ Ի՞նչ պիսի տեսնեմք անդ. միթէ աշխարհակալ հզօր պետութիւն մի, որ՚ի յարդուրդ իւր

ինտելեկտուալության զարգացման բոլոր դարերի մէջ, բնութեան կարգերն ու տարերքները մարդուն ենթարկելու ճիգերուն մէջ, ինչպէս նաեւ ազգերու միջեւ ունեցած յարաբերութեանց մէջ, ուր ամէն ազգ իր ուժին չափով կը ձգտի միւսներուն վրայ տիրապետելու, ուր ամէն ազգ կը ջանայ իր ազգային կեանքը ամրապնդել

ապահով ապառնանարան ձնացած էր Աւետարեկան Ս. Եկեղեցին, նա էր միայն Աղբուրեան միակեալ հզօրային ամենամեծ և խորհրդաւոր օրը, որոյ խորհրդեամբ միութեան ամբողջ հզօրեան պիտի քակտէր, և Աղբուրեան կապերը պիտի խզէր, որով իւր քաղաքային իշխանութեան կործանեալ հիմքի բեկորներուն վերայ՝ ի սուգ անմխիթար տակուրին ողբացող Հայն, յետ ժամանակայ հեթանոսական խաւարի մէջ խափան պիտի կորսնցանէր իւր ազգայնութիւնը, անունը և յիշատակը։ Ա յս դառն, բայց ճշմարիտ խորհրդածութիւնը յանկնարինս կը յուզէ վիրաը, սիրտը կը ճմլի և կը մռմռայի ազգի ապագայ Հայաստանեան վերայ, այնպէս իմն կ'երեւի իրեն, որ իւր սիրելի Հայրենիքը Պարսից լափլզղ բացերուն մատնուած է, եկեղեցիք հիմն ի վեր կործանեալք, հոյաշէն քաղաքք այրեցաւերք և ամայի, անաւերունչ ժողովուրդն մնչեալ ապառնալ ի սուր սուսերի Հինամեայ։ Կը տեսնէ իւր սիրելիքը, որ գեանաքարշ դայլոց վհմանկներին ի ղեր կը պատառին, ի ղեր իրենց դողդոջ ձեռները տատանելով՝ կողոպտին ձայնիւ գիժութիւն կ'աղաղակեն, անգութ Հինամին չը լսեր նոցա աղիողորմ ողբոց ճիչն ու աղաղակը՝ որ բոցաճարակ հրդեհներու ըղրտապատոյտ ծուխերուն հետ միանալ երկնից կամարները կը հասնին, ամեն կողմ սուր, ամեն կողմ ապականութիւն, ծարաւի երիվերը դեռ տապրդոր արեանց հեղեղներով կ'ուռճանի։ Ա յս սրտաշարժ տեսարանը պատմութեան ահաւոր կայծ մը կը ջղաձգէ իւր աչաց մէջ, այլ եւս չէ կարող հանդուրժել, երկնից և Հայրենեաց նուիրական սէրը սրտի խորութին մէջ իւր ամենազօրաւոր ջերմուտքն ձանձին հասած էր։ Աղատութիւն, կը գոչէ, ազատութիւն խղճի և կրօնի, ազատութիւն Հայրենեաց։ Ազատութիւն ձայն կը տան լերինք եւ անտառք, ազատութիւն ձորք եւ բլուրք, և ազատութեան ձայնը՝ իրրեւ եղերական հառանք մը ի քթթիել ման բոխանգակ Հայաստանը կը ցնցէ և կ'ոգեւորէ։ Ազատութեան աւետարեր գալուստը կ'ոլջունեն սրբ և կանայք, ծերք և մանկունք, ազատք և ընտանիք։ Զինք կ'առնեն, զրահ կը զգենուն և ազատութեան ըմբռնումով դրօշակին ներքեւ կը համբին։

Սրդէն Պարսից մոգախառնեմբ քաղնային հանգերձ Վասպուր և այլ ուրացեալ իշխանօք Տղմուտ գետի դարափանց վերայ իւր բանակը դրած էր։ Ս. Վարդան եւս միաբանեալ նախարարներով եւ զօրքերով՝ որոց թիւը 66000 ի կը հասնէր, կը բանակի դէմ յանդիման Հինամային։ Նախ քան զպատերազմն զօրաց եռանդագնից ձառ մը խօսելով՝ կը բացատրէ յառաջկայ ահաւոր պատերազմին մեծամասը հուրդ նպատակը, կը քաջալերէ կը իրախուսէ զանոնք երբեք չերկնչիլ ահաւոր Հինամիէն, այլ արիութեամբ մարտնչելով՝ ի պաշտպանութիւն Հայրենեաց Ս. Օրինաց, յերկինս՝ անմահութեան բիւրաւոր պսակն ընդունիլ, և յերկրի՝ քաջ անուն ժառանգել զաւրաց՝ ի զարս։ Եւ երբ սեզան ուղղեալ ամենատուրբ Խորհուրդն կը մատուցուի և ամենքեան կը հաղորդուին կենարար մարմնոյ եւ արեան Փրկչին, բոլոր բազմութիւնն երկնաւոր նահատակութեան սիրով վառուած՝ կը բորբոքի և կը գոչէ միաբերան. "Հառաջութիւն մահ մեր ընդ մահ արդարոյ և հեղումն արեան մերոյ ընդ արիւն սուրբ Մարաիրատային, եւ հաճեսցի Աստուած ի համաւոր պատարագս եւ մի ոտոյ զեկեղեցի

իւր ի ձեռս հեթանոսաց »։ Ո՛հ, ինչ սքանչելի եւանգ, ինչ որոտաձուչ ձայն, ահա կը յայտի սրտերնիս, արտասուքն ինքնին կը հոսին աչքերէն, և ով ազամանդեայ սիրտ այն ազատնեւրամ զուարճնոց քաղցրամնչիկ աւաջը լսելով՝ կարող է անդգայ գտնուիլ։ Ո՛վ տեսաւ կամ ով լուաւ երբէք քրիստոնէական արիւնահեղաշունչ այն ազգի մը հանդիսական վիճակորոշութեան մէջ այսպիսի սքանչելի կերպիւ արտահայտիլն։ Ո՞ր երկիր կամ ո՞ր գաւառ երթնեց և ծնաւ մի աւազ մէջ սրբազան գիւցազանց և կը բարձրանան բիւրներ, լուսերամ հրեշտակներ . . . ։

Աբեգակը հորիզոնէն վեր կը բարձրանայ, ռազմական որոտընդոստ ձայնները և այն երկու հակայ բանակները, Հայք և Պարսիկք ահագին բաղխմամբ իրար կը խուռնուին։ Տղմուտ գետը գոգկեաւ սարսափած արագօրէն կը սահի շամբերուտ մէջէն իւր հետ տանելով շատ քաջերու արիւնաշաղախ դիակները, լեռներն ու անտառները խլաձայնելոց յուսահատական աղաղակներով կ'արձագանգեն։ Ահագին ե՛ Հայ դիւցազանց ջղապինդ բազուկներու առած հարուածն, շատ քաջառոյգ Պարսիկ իշխանները, որք գեռ առաւօտուն գարնանային կենաց քաղցր արեւը կը վայելէին, նախ քան զվիջօրեայն սանդարամետական անգունդը կը գահավիժին . . . . . ։ Բայց՝ ահա որոտայ Մասիս, ցուրտ սառնամանիք հեղեղն պէս ի վայր սահեցան իւր ալեւոր ճակատէն. ձայն տուին լերինք, դոչեցին բերդք, բաղեցին ուժգին Հայկազանց սրտերն, գառն սրտասուք Թաւրեցին Հայոց շատ մանկիկք։ Եւ ինչո՞ւ չ'ողբայ Աղգն, ինչո՞ւ չը հեծէ աշխարհն, երբ տեսնէ իւր հակայ դիւցազնին կարմիր վարդի պէս Թաւրամին, երբ տեսնէ զՄեծն Վարդան խաղալ դաշտին մէջ դիտապատառ փառուած, բոցափայլ աչքերն խոպան մթագնեալ, մահուան մուժ ստուերն իւր դէմքը պատած, Հայոց կարիճ զինուորներն մէկ մանգաղով հնձուած, գարնանային ծաղիկ կալից դաշտն նոցա սուրբ արեամբ ներկեալ . . . . ։ Ա՛հ, անկան, Մօշնեցան, Թառամեցան վարդագեղ ծաղկներու նման, որք գեռ իրենց կոկոնները մէջ չը փթթած ոտնակոխ կը լինին այգուն անգութ գազանի մը գարշապարներուն տակ. սակայն իրենց անունն ու փառատակը անմահ մնայ և պիտի մնայ իրենց արեամբ նուիրագործեալ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ և Ազգի գոյութեան հետ։ Նոյա սուրբ փառատակը միշտ պիտի վառէ և բորբոքէ Հայ սրտերը դարուց ի դարս հաչակելու նոցա նահատակութեան հանդէսը։

Բայց Հայք իմ և Եղբայրք, միթէ Արտազու դաշտին մէջ անկեալ դիւցազանց փառատակը ուսնելով մեր երախտագիտութեան պարտքը լմնցին կատարած կը լինիմք. միթէ մեք եւս չունիմք այսօր մեզ համար անհատական պարտքեր, որոց ջատագովը նոյն իսկ Եկեղեցւոյ և Ազգի գոյութեան մեծ վտանգ կը սպառնայ։ Մեք եւս չունիմք այսօր մեզ դէմ ահագին ոսոխ մը՝ որ մեր անտարբերութենէն ոյժ և հոգի առած յօշ և յահեակ կը հարկանէ իւր երկայրի սուրն եւ ահագին կատարածք ու նախճիրք կը գործէ, ազգասլինչ խռովութիւնք կը յարուցանէ Ազգի խաղաղութիւնը վրդովելու համար։ Դարձեալ մեր տեսութիւնը Հայաստանի վերայ, դնենք նորա մութ խորշերը և ահա մեզ պիտի ներկայանայ սրտաճմլիկ տեսարան մը՝ որ մեր աչքերէն յորդ արտասուաց վտակներ պիտի քամէ։ Խօսի մի Հայ եղբայրք՝ որք անագորոյն բռնաւորի

մը, ապիտութեան խաւարի անգութ ձիրաններուն ատակ տառապագին կը հեծեն, որք ոչ իրենց պարտքը կը ճանչնան ոչ իրաւունքը։ Կը Թողուն որ անօրէն Ֆիւրան Հայոց գլուխ կոչանքն ծանրի պէս խլէ ընտանեաց ծոցէն, կը Թողուն որ Հայոց Ս. Եկեղեցւոյ նուիրական խորանն, որպ սրբութեան եւ անարատութեան համար երբեմն Վարդանանց դաշտն մէջ նոցա հոգին պատրաստ եղած էր, հրէշային գազաններ չարաչար սրտայզձեն . . . . Ո՞ւր Թողունք հազար Հայ անուան նախատինք բերող այն սեւագէմ ձիւաձներն, խաւարի կոյր արբանեակներն, որք դեռ քիչ ժամանակ առաջ իրենց դիւահնար մեքենաներով այնչափ մրրկալից փոթորիկներ յարուցին Աղգին մէջ, անհամար Թուխ ամպեր կուտակեցին նորա վերայ, որոց գժոխային փայլակն զարկաւ և վիրաւորեց Աղգին արդէն վիրաւոր կեանքը։

Այսպէս ահա մեր սիրելի Աղգն Թէ օտարներէն և Թէ իւր խորթ որդիներէն յանհնարինս կը տառապի, իւր աղիողորմ հեծութեան ձայները ղպոյան որտերու խորը կը Թափանցեն։ Սակայն ինչէ այս ամեն աղէտից պատճառն, ուչ ապաքէն տգիտութիւնը, որ շատ տգեղ յատկութեանց կործանման անդունդին մէջ գահավիժեցին զինի Հայ մարերու վերայ եւս կը բզկնանայ այսօր և իւր ահեղ կատարածը կը չարունակէ։ Ո՛հ, ալ բաւական է Հմայք և եղբարք, սրբենք մեր Աղգին Թշուառ արտասուքներն, պատռենք սիրով նորա արիւնաթաթախ վէրքերն, և ինչպէս.—յարատեւ ջանիք և անխոնջ աշխատութեամբ պատերազմելով տգիտութեան խաւարի դէմ, զարնենք այդ մահապզեաց Թշնամին և խորտակենք նորա բոլոր զօրութիւնը։ Թող այսօր Տղմուտ գետի ափերը հանդչող դիւցազանց ածիւններէն վրկաւէտ կայծ մի շողայ, վառէ մեր առկայծեալ սրտերը, բորբոքէ և անմահացնէ։ Ուխտենք այժմէն հանգոյն Վարդանանց նուիրել մեր անձը Աղգային յառաջադիմութեան համար։ Այո՛, ուխտենք սիրել, միշտ սիրել, մեր Թշուառ ու տառապակիր Աղգն, նորա բարեբաստութեան և բարեկեցութեան համար չը խնայենք մեր քիրան, ջանքն ու աշխատութիւնը։ Այն ատեն Աղգը մէջ խաղաղութեան որոմն սերմանող վարձկաններուս սատանայական մեքենաները չարաչար պիտի խորտակին և ինքեանք իսպառ հալածական պիտի լինին Աղգի մէջէն, ինչպէս մուխ շամանդալները՝ ի ծագել արեգական։ Այն ատեն Աղգը նոր պիտի, նոր եռանդ պիտի ստանայ և ժամանակին համընթաց պիտի յառաջադիմէ։ Այն ատեն պիտի կարզանամք ասել համարձակ Թէ հարազատ որդիք ենք Վարդանանց, և ապագան ամէն տառերով պիտի դրոշմէ մեր անունը ալեւոր Մասեաց սարի վերայ։

Ա. Եփս Կարապետեան
Պօլէոյի Ազ. ժող.
Վարժարանի։

ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գիրապահս Ներսէս Ծ. Վարդապետեան Հնդկաստանի այցելութեան ժամանակ Թէոդորոս Պարխարքի մի նշանաւոր կնդակին ձեռք բերելով օրինակած է, իմանալով որ սորա Աթոռոյս մէջ բնագիրն չը կայ։ Սոյն Կոնդակին արժան կը համարինք հրատարակել իբրեւ պատմական յիշատակարան, որոյ մէջ կը պատմուի՝ Թէ ինչ տառապանքներ կրած են Քրիստոնեայք Երուսաղէմի մէջ Օսմանեան բարեխնամ Տէրութեան ախրապետեալ էին առաջ։

Յիսուսի Քրիստոսի Ծառայ եւ Շնորհիւ նորին Սրբոյ Քաղաքիս Երուսաղէմի Պարխարքը՝ ի Տէր Թէոդորոս մեղապարտ վարդապետ։ Յարմէ սիրալ Սուրբ Հոգւոյն եւ օրհնութիւն Աստուածային ընծայեալ նուիրիցի, Քրիստոսասէրդ ողջոյն, և նոյնպարզեւ սէր մշտնջենաւոր յաժարական բաղձանօք յԱստուծոյ ամենասուրբ Աջմէն ղրկողէդ երանելոյդ առնուագոյն վահճանական Պարսն իշխանացդ, խոհեմ և հանճարեղ Տօլմեհմուտպաշդէդ որք յԱրեւելեան Օրհնեալ երկրէն և՝ ի մեծահամբաւ մեծի մայրաքաղաքէն Ջուղայու և յայլ երկրէ գնացեալ և մնացեալ և վերադարձեալ էք յայդը, մեծացդ և փոքունցդ, յատկացեալ սիրելեացդ մերոց, և օրհնեալ ընտանեաց ուստերացդ և դստերացդ և համօրէն մանկանց ձերոց և բարեկամացդ, որոց համայնից լոյսի խընդալ՝ ի Տէր յամր մշտաբերկրեան ցնծութեամբ և յաւէտ ուրախութեամբ. Ամէն։

Եւ զիմի սիրոյ ողջոյնի և օրհնութեանս, յայտ առնեմք ձերում Աստուածասիրութեանն սկզբնաւորութեանդ նեղութենէ մերոյ՝ զոր կրեցաք՝ ի ժամանակս գալստեան չաստուածամարդեանդ նորին ի Իսահմանս Եգիպտացւոց, ուրմէն՝ առաջեմ զանիկիրսն անաալ՝ և մի տատապանալ ախտիւն ձանձրութեան։ Ի հաղար երիւր հարիւր քառասուն և եօթն մերս Հայկազեան Թուոյ, և՝ ի երեսներորդ աւուր ամսոյն Յունիսի սկիզբն եղեւ նեղութեան և Թշուառութեան մերոյ, այսպէս գուժաւոր գրաբերք ոմանք հասեալք եղեն՝ ի սուրբ քաղաքըս Երուսաղէմ, և իսկայն հնչեցաւ լուրս այս բօթալի՝ ի յաշխս մեծաց և փոքունց՝ Թէ Գաղղիացիքն, այսինքն Ֆրանկոց ազգն, երկու հարիւր պատերազմական նաւովք վերաժամանեալք եւ տիրեալք են Եգիպտոսի հանդերձ սահմանօքն, և կամին գալ՝ ի վերայ Եաֆայ քաղաքին, և տիրել կողմանցս այսոցիկ։ Արդ՝ ի նոյն աւուր քաղաքիս այսազգիքն՝ մինչ լսեան զլուրս զայս բօթալի, վաղվաղակի՝ առահի նոցին, սկսան բոլորքն՝ շփոթիլ վարանիլ և ցնորեալ ափշութեամբ եւ լեալ կացին՝ ի յոտին առ հաստարակ բազմութիւնքն, և՝ ի նոյն աւուրն Թէ որպիսի լինչ դարձ դարձեցին զգրծս չարութեան ընդ քրիստոնեայ ազգացս, չէ հնար պիտակեան ձառել, այլ միայն Աստուածոյ գրեմ, զամենայն մահացուցիչ Թոյնս գառնութեան սրտից իւրեանց յօժարութեամբ կամեցան Թափել՝ ի վերայ տառապեալ քրիստոնեայ Աղգացս, զերից աղգացս վերինն և Թագաւորեան կալեալ եղեն՝ ի բանի՝ ի մէջ բերդին, և զվնասաւորն մտանելով՝ ի վանսն որսնել զղէնս, և ոչ գտին, և՝ ի ներքոյ գրանցն վճռով լրս պահապանացն կացուցին, ի Սուրբ Փրկչայ եւ Հրեշտակապետաց վանսն, և՝ ի սուրբ Ծնանդ, եւս՝ և զրանցս դրանցն՝ ի մէջ հանելով եւսն՝ ի

ձեռս նային , որ և ոչ կարէաք մեք՝ յայնմ հետէ շարժիլ ի տէր կամ՝ ի յահեակ , մերկ պատեան սուսերոք , եւ այլ մահացուցիչ զինուք պրտհ առեալ՝ զմիմեանս յարդարեալ ի վերայ այսր և այնր վանուց , իբրեւ ըզ գաղանս որք խլեն արեան ծարաւիք ջնջել և բառնալ ի կենաց միահատոյն զամենայն քրիստոնեայս եւ ջանային կողոպտել զվանս և աւարի առնել զինչս ամենայն քրիստոնէիցն որք են այսր , որ և արդեամբք խոկ՝ ղղրծն կատարեցին , պատառել ղերմն վանիցն Լատինացւոցն զեզան ի նեբբս և կողոպտեցին կիսով չափ . մինչեւ կաշառակուքն ի նոցանէ գնեաւորքն ի վերայ հասեալ և զարուեստիւն հասարակ ամբոխին՝ խափանէին և գադարեցուցանէին , և մեք ուսեալ ի տեսարանէ յայնմանէ , ընտրեալ զիրքը ջան՝ զհարիւրապատ քակ յոլով կաշառատուութեամբ զերծուիմ գազաբ ի մեծագոյն չարէն : Յետ այսր ամենայն ի ժողովեալ զմիաբանս վանօրէից եբեք ազգաց , ուեղի քան զամին կիսոյ եղեւ իբր ի բանտի ի մէջ Տաճարին Սրբոյ Յարուեստեան մինչև հարիւր եօթըն աւուրբ կացին մնասցին բանտարկեալ , և ապա բազում աղաչանօք և ծանր ծանր կաշառօք հազիւ ազատեցան ի բանտէ անտի : Ետկ յաւուրս Շաբաթու մեծի ամենախնամութեան Տեառնընդառաջի Քրիստոսի Աստուծոյ մերոյ , դարձեալ վերատին չարաժողով եղեն և կալան զամենայն ամուսաբարոյ և հարազատ սիրելի ուխտաւորսն տարեցն այնորիկ և եղեն ի բանտի (ընդ քաղաքացւոց երից ազգացս երկու հազար անձինս աւելի կամ պակաս) ասելով Թէ սքա կենակից եւ հաւատակից են ընդ Թշնամին մերոյ Գաղղիացւոյ . ապա ուրեմն մինչդեռ ժամանակս ի ձեռս է , բարձցուք ըզ կեանս սոցա և Թողցուք անուն քա ջութեան . ոչ չատացեալ սոսու ըս պառնալիք , որք խրախոյսին ի մեզ , այլ գունդս գունդս խմբիւք անօրինաց արարեալ՝ երթային առ պատուհանն , ուր իբր ի բանտարկեալ էին ի մէջ Սրբոյ Յարուեստեան . հնչէին հայհոյեին եւ միանգամայն (փշտոփով կամ Թուֆէնկով) ի կենաց զրաւել նկրտեին , որպէս մի ոմն ի միաբանից մերոց մահացուցին ի մէջ Սրբոյ Յարուեստեան Տաճարին . ոմն անուանելի և ազիզ ողորմ ազգաւոյս : Արդ այն ինչ մեք ա կանատես եղաք սոցա ամենայն դառն նեղութեանց , փական ջերմուն մեր ի փաղաքշական աղաչանաց առ գառաւորս , կասեցան ձեռք մեր ի տալ եւ ի մատուցանելոյ զծանր ծանր և անթուելի կաշառս անօրինաց , ուստի և դառարկաձեռն մնալով ի դըրամոյ անտի , բայց սակայն՝ անձնապատան եղեալ օրհնեալ աղգիս մերոյ ընկալաք զգազում դրամս յայլմէ ումմէ , որ պատճէ զձեռս իւր ընդ այլ կրօնիս . որոյ կացուցաք զանձինս՝ յոյժ պարտական , որպէս զի մի լեցի բան մարգարէին , որ ասէ . " Նախատինք դրացեաց և այսն կառաչանոց այնոցիկ, որք շուրջ են զմեզ " , զի եթէ չէր մեր առեալ պարտիւք զդրամն զայն, հասեալ կայն բազում չարիք Ս. Աթոռոյս Յա. բաբացւոց , որ և այլ բազմատարագ կերպիւ զնեղութիւնս զայսոսիկ ի ցաւ նախ երեսանէն մինչեւ ի միւս ի նոյն Յունիսի կրեցաք : Բայց մինչ հասապ ցերկոտասան փետրվար ամսոյ , ահա այն սրա կրկին եհաս գազժկան և ծանոյց բնակչաց Սրբոյ քաղաքիս Թէ Ֆրանկաց առեալ են զԱրեգ քաղաքըն հանդերձ սահմանաւն , և այժմ խլեն ժամանեալ ի Ղազէ , ի սուղ մի ջուղ մոցեն սոք նոյն և ի Պաղեստին , ըստ սրում չունէին սք զիմադրել՝ ա-

ռին իսկ զՌէմիէ և զԼիւդ և վտլա-
զակի պաշարեցին զԵաֆայ. և զի՝ անդ
հաւաքեալ էին բազմութիւնք զօրաց
Աթաբայոց, մինչ պատերազմեցան
առաւս ինչ, և որով առին զԵաֆայ,
վաննոյց անողորմաբար կոտորեցին զը-
զօրան և զքանակիչան ոչքան և կամեցան
և զքաղաքն աւարի առին՝ զվանս մեր
սիրեցին, և արարին տեղի բնակելոց
վիրաւորացն իւրեանց. և վազճալի մի-
աբանան մեր՝ ոչք անդ՝ մերկեալ յա-
մենից Թողին ի Թշուառութեան, և
գնացին անտի յԱկքէ, պաշարեցին ի
Մարաի երեքն. եւ սաստկութեամբ
պատերազմեցան անդադար եղեալ ընդ
ձոզար փաշային, դղրվ երկաքեանն
եւս ոչք հզօրագոյնք և քաջք, տե-
ւեաց պատերազմ նոցին մինչեւ ի Մա-
յիսի տասն, հուսկ յետոյ ոչ կարելով
առնուլ զԱկքէ ի մեծազօրէն յայնմա-
նէ, լը ցասմամբ և բարկութեամբ վե-
րադարձեալ եկն ի Եաֆայ, տապալեաց
զպարիսպս քաղաքին, և էարկ զծանր
առւգանս ի վերայ բնակչաց նորին.
որ և կողոպտեալ վանքին մերոյ բաժին
անկաւ ի տուգանացն հարիւր քսակ
դրամ, և արար զաղաւմ աւերութիւնս
սն, ի նմին քաղաքի էարկ հրկիզու-
թիւն, որ և երկու պիտանի տունք և
չորք մաղազայք մեր էին, ոչք այրե-
ցան: Ա յսոցես չուեալ գնացին Յե-
դիպատս, բայց ընդ գնալն նոցին ի
վերայ Ակքէոյ, բնակիչքն Ռէմիէյու,
որպես թէ մի մասն վասն երկիւղի
նոցա եռաւն և զեռեղեցան ի Յոպպէ,
և լեռնական ֆելլահքն բազմութեամբ
դիմեալք աւարի առին զՌէմիէ, եւ
զվանքն մեր՝ որ անդ ոչ միայն կողոպ-
տեցին, այլ և քոյքայեալ աւերակ
գարձուցին, մինչ վերկաթի վանդա-
կաւն պատուհանից բարձեալ տա-
րին, Թուղ զոգաս սրբութեան և զպի-
տոյս վասնին, որք կային բազմութեայ
ժամանակաւ, և ընդ աւարսն՝ զոր
անդ գտին թէ զհաւատակիցս իւր-
եանց և թէ զքրիստոնեայս, զծերան
ոսկանին, զերիտասարդս և զմանկունս
գերի առեալ ցրուեցան ի բնակու-
թիւնս իւրեանց, և զի՝ եթէ անտի ե-
կելոց հարցանէաք առ ի տեղեկանալ՝
յարտասուս ցնդեալ ոչ բաւէին հա-
դիք նոցա մեզ պատմել սակս ահերե-
կան կոտորածոյ և ամայութեան եկե-
ղեցեաց: Ի կողոպտելն Ռէմիէոս սա-
կաւ յառաջ եկին նոյն բազմութիւնն
մերձ քաղաքիս ի Սուրբ Սիօն բնակե-
ցան սակաւ ինչ՝ իբր թէ գնալոց են
ի պատերազմ, և ի միում գիշերի մի-
տեալ ի վանս Փրկչայ զինի կողոպ-
տելոյն աւերեցին զեկեղեցին սուրբ,
զխաչկալն կոտրեցին հանդերձ սեղա-
նատն, և հանդերձ նորին կոյսին երե-
սուն եւ երեք պատուական ձիթենի
ծառք, որք մեր էին, զոյն եւս սր-
մատախիլ արարեալ՝ և անտի չուեալով
գնացին՝ ի Ռէմիէ և կողոպտեցին:
Ա րդ ի փետրվարի երկուտասանն մին-
չեւ կոչնչիլ և գնալն չարեաց, այսի-
քըն երկրորդ Յուլիանոսի և զօրացն
իւրոց, և ի ժամանեն մինչեւ Եպար-
քոսին մեծին Գամասկեայ ի Յոպպէ,
որքոյ քաղաքիս պղտգիքն, ոչ եթէ
նման առաջնոյ նուազին, այլ հաղա-
րապատիկ ծանրութեամբ կշռոյ քան
զառաջինն մեղ քրիստոնէիցս զբաժակ
մահաբեր դառնութեանց արբուցին,
զոր ոչ ըստ միոջէ չէ պարտ գրել և
զծերգ պատուական գլուխն ցաւեցու-
ցանել: Իսկ Եպարքոսն չետ քան-ա-
ւուրս յոյժ մեծաւ զօրու ի Եաֆայու
գնացեալ ընդ նոսա հանդիպմամբ պա-
տերազմեցաւ և նիւսն եղեալ՝ մինչ
զղարդս՝ զանօթս՝ և զամենայն պատե-
րազմական գործիս բարձեալ ի
յագեցումն Թշնամեացն, ինքն և ընդ
նա ոչ միայեալքն լեալք մաղապուրծ

եղեն անկեալք ի Եաֆայ, վասնորոյ լուսահոգի Սրբազան Պատրիարքք եղ- բայրն մեր առաւել նեղեալ ի բռնա- ւոր չքաւորութենէ կամեցաւ դալն ինչ անդորրութիւն գտանել ի կեղեք- ջայ, եւ գնաց ի Յոպպէ, այսինքն ի Եաֆայ յոտս վսխ արքային, ի ՌՄԹ թուին, յամենեցուն Մայիսի յաւուր մե- տասաներորդի. ուր գոնէ զամանս յա- ջողութիւն կարասցէ ժողովել արքու- նական հրամանաւ. և մինչ ինքն երա- նելին այն՝ յայսմ խորհրդի յօդուտ արք- բայ տանս Քանայր, Տեառն կամօք անձ- նական իմն տիարութիւն գնովաւ պա- շարել, ուր կարաց երբեք Ճարտարու- թիւն բժշկայ օգնել ինչ նմա, անդէն ի տան և ուրենեորդում Յունիսի առ Տէր ննջեաց, զորոյ հոգին Տէր Աստուած ընդ սուրբս իւր դասեսցէ: Յետ որոյ՝ մինչ հեծեծանօք և դառն արտասուօք զՀայց նեղութեան կե- րեալ և զքաւր դառնութեան ընդ ար- տասուս խառնեալ ըմպէաք, յանկար- ծակի յանակնկալ ժամու՝ կրկին վերս ի վերայ վերաց և սուր պատ ի սիրտս և ի հոգիս մեր Թափանցիկ ընկալաք. զի եղ հրաման ի փոխադրչէն, Յու- նայ և Հայոց զվերջիկ և զԹարգմանն ի Եաֆայ առ- քանակն իւր կոչել. եւ մեր ահիւ և գաղութեամբ լսեալ շու- տափոյթ կատարելով զհրամանն, ա- ռաքեցաք զվերջիկ Պետրոս արքեպիս- կոպան նախկին նուիրակն ձերում Աս- տուածասիրութեան, և զԹարգմանն ընդ Յունայ, որոց գնացեալ ի բանա- կին, յանդիման եղեն Փոխ արքային: Յայնժամ՝ Փոխադրչէն՝ սկսաւ առիւ- ծադար գոչել և գոռալ ի վերայ նոցա ասելով Թէ յորմէ հետէ եկեալ եմ առ, արդեօք ժամ մի գործոյս գտա- նեցայք, յոչ, ուրեմն ահա յորմէ ժամանակ, ձեր հաւատարմութիւնն Տէրութեան ցոյց ոտից, և մանաւանդ և եմ անվնաս, զրպ ամենայն Թագի ի յոգեցուցմն Թշնամեաց հազարաւոր քաղաք փոխ ինդրեմ ի ձէնջ. իսկ նոցա ահիւ պահպանեալ՝ ապրեցեալ կանեալ. բայց անօգուտ եղեւ, եւ և յետ բազում նեղութեան հինգ տա- րիւրական քաղաք ի վերայ երկու ազ- գացս բարդեաց, հինգ հարիւր քաղաք մեղ, և հինգ հինգ հարիւր քաղաք Յու- նաց. և ապա եկեալ նոցա ի բանա- կէն անհնարին վշտօք պաշարեալ մեր, զեր երկին ոչ կարացաք գտանել, ապա սկսաք կնկղալ իբր գառնէ ի գառն մնբացիկ ընկալաք զդրամն ի քաղա- քացւոց, մինչ զի՝ եւս առաք զկա- նանց զարդսն ի պարանոցաց, ոմանց վսխ անուամբ կնդրելով և մնբհակ տալով մինչ ցամսօրեայ ժամանակ, ո- մանց կրկնատակոսիւք, և ոմանց վա- ղուցայ առնելով, սչ Թողաք զմի փող ի քաղաքացւոց մնա, Հայոց և օտա- րոտի ազգաց, զոյս առնելով հազիւ հազ հատուցաք միրիին. սակայն չմի- նաց զօրութիւն աւուր հացի ծախս առնելոյ, և եթէ ի մի վայր գումա- րեաք զտուեալ մնբհական մեր. ար- դարեւ լինիւր կատեցեալ իբրեւ ըզ- բազակ մի ի վերայ երկրի, ապաքէն և Փոխադրչէն ի լսանալ տարբեր՝ դար- ձեալ վերատին զօրաժողով լեալ՝ գնաց յԵգիպտոս, և զոյն ընդ բռամբ ա- ծեալ միջնորդութեամբ Ինկլիզ ազգաց, առանց պատերազմի և դիմահարու- թեան ճոխատու բանակաց՝ հանեալ զԴաղղիացիան յարտաքս, և ինքն ե- մուտ ի ներքս զօրք իւրովք, և անդ՝ վեց ամաց չափ զկայ առեալ. և ի տե- ղի իւր՝ զմի ումն ի Բդեշխից փոխան իւր կարգեալ՝ եկն հանդերձ իւրայ- նոցքն ի վերայ Եաֆայու՝ խոյլայ զբ- նաց՝ ի մեծն Պօղոս: Բայց արդ յետ անցանելոյն Փոխ արքային ի կողմանցս, այս կողմերուս իշխող Փաշան յոյժ զբղ-

ուեցուցեալ էր զաղբը բնակիչն, վա-
սըն այսորիկ՝ երկրացիք գրեցին դիմս
ձաղար փաշային, զի ազատեսցէ զնո-
քեանս ի ձեռաց նորա (զսա սրսում
գիտէին յառաջագոյն բնակիչք Սրբոյ
քաղաքիս զնկճիլ ինչ ունել իշխող փա-
շային մերոյ և ձաղար փաշային ընդ
միմեանս ի վաղուց) և նա առաքեալ
բազում զօրս պատնաղէն կուռն զնո-
նոք պատեալ պաշարեալ զնովսհա-
յեացն Եաֆայ. և ի յորգելանս ե-
գեալ դժնեաստեսիլ և ժանտաբարոյ
փաշան, զի այն յայն աւուրս անդէն
բազմիցս սաստկագոյն գանս հարեալ
խշճանքն ոչխղվարդապետին և այլոց մի-
աբանից մերոց անդր եղելոց, մինչ զնի
ի դուռն մահու հասուցեալ ի վերայ
հիւանդացին տկարացեալ՝ ոչխղ վար-
դապետին երեք հարիւր քսակ պարս
կուտեալ (զոր զյառաջագոյն առեալ
քսակս յիսունով և հարիւրով) և ի
սաստկութենէ սովոյն ինքն հանդերձ
իւրայնօքն յանբանից և անասնոց ա-
րեամբ և մսով կերակրեալ, և ոչ զը-
տանելն զնոս իրաց, ապա մոռեալ ի
նոս փոխուստ առեալ ի վերայ ծո-
վուս դնացուածոց. յայնմ հետէ ձե-
ռագիրքն ի ձեռս զնոսուրայ եկեալ
ի Սուրբ Աթոռս, պահանջեցին ի
մէջ զիտուս իւրեանց ընդ տոհոսից: Եւ
արդ՝ անկեալ կամք ի ներքոյ ծանր
պարտուց մինչ ցհազարաւոր քսակ.
ուրեմն, ոչ բարի բարեկամք մեր, և
յետ Աստուծոյ յոյս և ապաւէն, ա-
հա ի ձեռն այն գրոցս լալագին եւ
արտասուահեղ աչօք անկեալ յո-
ւոս ձեր մեծութեան, և պաղատիմք
կողկողանօք եւ բազում թախանձա-
նօք աղաչեմք եւ ժառեմք յողորմա-
ծութենէ ձերմէ արագագոյն քայլիք
ղրկուն զնմուծեալ ձերոց. և ի մի
գումարեալ Աստուածահաճ կամօք հո-
գածու ընտրեալ փութով և ոչ յապաղ
ժամբ անօրինել Աստուծով և կազմել
զրեղ ինչ աղգու մեծի հիւանդուելո.
նոյն, բուժիչ զբազդը անուն Սրբոյ Յա-
կովբեանց սիրելեբահակաչ հանրաստնէ
Քրիստոսահաստատ և Առաքելական
Աթոռոյս ձերոյ և Մօրս լուսոյ. քանզի
օր ըստ օրէ ունի յառաջիկել և յառելե-
նալ պարտք ի վերայ սրբոյ Աթոռոյս.
մինչ զի սկեզբնական զարդուցն եւս
ձեռն արկաք ի բժշկութիւն ցաւոց մե-
րոյ՝ բայց եղեն զնբ զանք, որպէս
վայելչէ և պարծանք է մեծութեան
ձերոյ՝ այնու կերպիւ և օրինակաւ զբ-
նաոյիք. զի ձեր է Սուրբ Աթոռս և
մեք ի միջի նորին ի կողմանէ ձերոյ
պաշտօնեայ և ողորմուորք, և որպէս
պարտն իսկ առնել և օգնել Սրբոյ Ս-
թոռոյս բարեպաշտ կամայ ձերոյ է
յանձնեալ և թողեալ, այս ի մինչ
պահանջի, զի հարատևաւորէն ծանու-
ցեալ ձեզ, և զորպիսութիւն ծառա-
յութեան և նեղութեան մերոյ և սրբ-
ոյ Տանս յայսմանեցուք, վասն որոյ՝ ոչ
դանդաղեցուք. զի ոչ օրէն է լռել ի
ժամ նեղութեան, մինչ թշնամիքն մեր
իբրեւ զառիւծ բերանաբաց են յա-
փշտակել ի ձեռաց մերոց զպարծանս
մեր և հանատպող որոգայթ լարել ո-
ոյց մերոց, յորոց Տէր փրկեսցէ, եւ
զմեզ նեղեալս պահեսցէ ի յորոգայ-
թից օտարոտի ազգաց և հակառակոր-
դաց մերոց, և մեծազարձ ազնուու-
թեան ձերոյ, կար և կարողութիւն
ընդհեսցէ, օր աւուր զօրութենէ ի
զօրութիւն, և ի փառս ի փառս ա-
ճելով անվարձ պահեսցէ յամենայն
կերպ փորձանաց երեւելեաց և անե-
րեւութից, նմանապէս և օրհնեալ
զաւակաց եւ բնաւ սիրելեաց ձերոց
կեանս ընդհեսցէ, աղաստս առնելով
յամենայն վտանգից, ընդհօք Սրբա-
զան փրկագործ Տեղեացն Քրիստոսի,
և օժանդակութեամբ Սրբոց Յակով-

բեանց՝ ուղղ պահելով զմիրելիսդ մեր ամն բազումս ի պարծանս Աղխա և ի վինուԹիւն Սրբոյ Գահոյս, ի ցընծուԹիւն պարոյ մերոյ. ամէն։

Գրեցաւ նեղուԹեան և յորդորանաց գիրս ի վայելչադարդ Մայրաքաղաքս սուրբ Երուսաղեմ, ի տիրահաստատ Սուրբ ԱԹոռս ամենայն Հայոց. ի ՌՄԾԲ մերս հայկազեան Թուին, ՅՕգոստոսի սկիզբն։

Սբ֊ոյ Երո֊սաղէմ յեփին պաղպաՆեայ.
Նո֊իրակ Զողք Յակոբ Աբեղայ։

ՀՐՈՎԱՐՏԱԿ ԱԼԻՒ

Հետեւեալ հրովարտակին եւս, զոր Ամիրապետն Ալի տուաճ է Հայոց Աղգին, և դարձեալ օրինակուած է ի Հնդկաստան, արժան կը համարիմք հրատարակել։

Յանուն Աստո֊ծոյ բարերարին և գԹածի. յորմէ հայցեմ֊ք ղօգնո֊ԹիւՆ։

Գոհացողական փառատրուԹիւն Արարողին ամենեցուց և յարդական խաղաղուԹիւն մեծի պետին և բարեբարոյին Մահմետի ընդ նմին և Սրբազան տոհմի նորա։

Յետ այսր ամենայնի. այս է բան ԹարգմանուԹեան ուխտին, զոր գըԹեաց Հաշամ որդի ԱԹատա որդի Վաշատայ ըստ հրամանի երանելի պետին արեաց և Աստուածային առիւծուն սրբոյն սրբոց՝ Ալի որդւոյն Աբիթաղեպայ փառաւորելոյն Քուջի գրով ի հռչակաւոր վանս ԽարաւԹայ գերապատիւ բնակարանին յամենաՆերն ատփար, ի քառասներորդ ամի հիճրեԹի։

Քանզի ՅԱդիսն Հայոց սրբ ումանք երեւելիք. իմաստունք և նշանաւորք, որ են Յակովբ Սեբէոս Աբդշուխ և որդին Սահանայ և Աբրահամ քահանայն, եպսկ եպիսկոպոսն և այլք բազումք մինչեւ քառասուն անձինք խօսակից եղեն ընդ իս և առաջիկայ գտան այսմ ուխտադրուԹեան և ժամեցին յինէն առնել զայն, որք և առնէին բարերարուԹիւն և այցելուԹիւն գործակալին մերոյ, զոր առաքեալ էաք ի վերոյ բերդսրէից և ի սահմանադլուխս. այն եղեւ պատճառ խօսակցուԹեան մերոյ ընդ նոսա եւ ուխտադրուԹեան. վասն այնորիկ եդի ուխտ ընդ նոսա ի կողմանէ իմմէ եւ ի կողմանէ ամենայն ազգաց Խալամաց յաբեւելից մինչեւ յարեւմուտս. առայս՝ զի ըստ ճշմարտուԹեան նորա ընդ խնամօք և հովանաւորուԹեամբ իմով են, ցորքան ես կենդանի իցեմ. և յետ մահուան իմոյ ցորքան կրօնն Խալամի հաստատուն կացցէ. և քրիստոնէական քարոզուԹիւնն տեւիցէ, հարկ է ամենայն Թագաւորաց և իշխանաց և այլոց ամենեցուն լսացուցանել Աստուծով զուխտս մեր. ցորքան ժամանակ ծովն Թանալ կարիցէ ըզբուրգս և զկուխս. և յերկնից անձրեւ տեղասցի, և յերկրէ խոտ բուսանիցի և աստեղք լոյս տացեն. և առաւօտեան ծագեսցի ի վերոյ հիւրիս և օտարականաց. և ոչ ոք իշխեսցէ զայս ուխտ իմ դրժել և փոխարկել, առանց յաւելլոյ և նուազելոյ կամ այլայլելոյ. վասն որ յաւելուն՝ առաւելուս զպատիժ իւր և նուազեցուցանէ զհամբերուԹիւնս մեր. և ինքն և այլայլողն այսմ ուխտի համարելի է հնարագէտ նենգողն՝ զոր ես եառ նոցա. և

կարդ լինի ընդ անհաւատարիմն իմ. և ձշմարտապէս կարծանիք զաւետն Աստուածային. և լինի պատճառ զայրացման միայնոյն Աստուծոյ : Քանզի բաւական է վայրաքիւն Սէյիտ եւ պիսկոպոսին և այլոց բազմաց . որոց անուանքն ի վեր անդր գրեցան : Քանզի գլխաւորքն քրիստոնէից խնդրեցին չինէն հաստատել ուխտ և դաշն ի մէջ ամենայն քրիստոնէից . որք ընդ հովանեաւ Միւսլիմանաց զետեղեալ կան . արդ այսու ուխտիւ չանձնարաքրութիւն և անպորոքութիւն լինի ի մէջ Քրիստոնէից և Միւսլիմանաց մշտնջենաւոր : և հաւատարմացուցեալ է առայն ինչ իրս , զորս ես եաւս նոցա զբազարթ դիմաք և հաճութեամբ կամայ . և սիրելի է ինձ վարիչն այսու դաշամբ՝ ցորքան ժողովուրդք նոցա կայցեն և ի հպատակութենէ մի եղանիցեն . եւ դարձուսցեն վնաքեանս չամենայն աստելութեանց և չարեաց առ կրօնն ազգին իմոյ . զի եթէ կայցեն նոքա հաստատուն ի վերայ ուխտի իւրեանց. նմանեալք լինին Մուսլիմանաց և Մուսլիմինայց : Արդ չանդիման կացուցի ես զիշխանս Մուսլիմանաց և զաղնուագոյն դպիրս իմ. և հաւատացեալ զուխտ իմ. զոր Աղգն Քրիստոնէից չինէն խնդրեցին ստանալ . և դրեալ զդաչինս վասն նոցա առ ի մնալոյ զինի նոցա . զի եթէ թագաւոր կամ իշխան կամ այլ որ նեղեսցէ և տառապեցուսցէ զնոսա , նոքա ցուցցեն զայս գիր ուխտի իմոյ . քանզի առաւելապէս Թագաւորաց և ամենայն Մուսլիմանաց է պարտաւորութիւն առնել ըստ հրամանի մերոյ . որպէս զի գործոցք հաւատարմութեան կատարեսցեն զհրամանս մեր և պայծառացուսցեն զուխտս մեր և արասցեն զհաճոյս մեր ըստ դաչինս՝ զորս ես ընդ նոսա եդեալ եմ, զի մի լինի անհնազանդութիւն բաղդ ըստ հրամանի և պատուիրանի իմոյ . և հարկաւոր է ոչ նեղել և ոչ առնել դբրիստոնեայս . որպէս զի այնու արարողութեամբ իցեն կատարիչք ուխտիս մերոյ և դաչնադրութեան :

Որովհետեւ այս ուխտ իմ բեռն է և պարտաւորութիւն ընդունողացն և ղպրացուցիչ է նախանձաւոյց և զուխտիս . վասն որոյ կամիմ զի մի լինի վիճաբանութիւն քրիստոնէից ընդ ազգին իմոյ իշխանութեամբ փառաւորելոյ : Իսկ եթէ որ նենգիցէ գրելոցն չինէն վասն քրիստոնէից՝ որք արժանաւոր գտան այցելութեան , այնպիսին պատճառ լինի խափանման Աստուածային հրամանի , որ ազգեաց ինձ առնել քարեխրատութիւն ազգին այնմիկ և փրկել յամենայն տառապանաց և վշտաց : Եւ արդ այսու ուխտիւն ընդ նոսա՝ որք խնդրեցին և հայցեցին չինէն և յամենայն քարեկամաց իմոց . և եաւս նոցա ուխտ Աստուածային , նահապետաց . Մարգարէից և ամենայն արբոց յառաջ նոցն մինչեւ ցվերջինն . և վկայէ ինձ հրամանն և բանն Աստուծոյ առ սուրբ մարգարէան . առաքեալ ի ձեռն հրեշտակի վասն հնազանդութեան օրինաց և կատարման պարտուց , եւս և հաւատարիմ ճնալոյ ի վերայ Աստուածային ուխտիս :

Քանզի Քրիստոնեայք ընդ իշխանութեամբ իմում ժողովուրդ իմ են . և ես իշխան եմ ի վերայ նոցա , ուրեմն հարկ է ինձ այդ առնել նոցա . և պահել զնոսա յամենայն չարեաց և ի վշտաց . և վարձ բարի ճնասցեն ինձ և ազգին իմոյ՝ որք սիրեալ կան ընդ ողորմս սիրելոյ :

Եւ զոր ինչ հարկ տեսանեմ է իմ տալ իշխանացն՝ աւելի քան զայն մի առնուցուն . և մի որ վշտասցուսցէ եւ նեղեսցէ զնոսա , մի որ վոխեսցէ զաչխարհս նոցա . ոչ զկրօնաւորն ի կր-

ջոհաւորութենէ, ոչ զբրիստոնեան ի բրիստոնէութենէ, ոչ զմիաբանականն ի միաբանականութենէ եւ ի միհնաւոյ նոյ իւրեանց, մի արգելցեն զքարոզչաց եւ զքարոզութիւնն նոցա. եւ մի ատելեսցեն զընակարանս եւ զգաւառս նոցա. եւ մի մերձեսցին ընդդէմ նոցա ի ժամ կառավարման եկեղեցեաց. մի իշխեսցեն բառնալ զիշխանական եկեղեցեաց նոցա: Ա յժմէն հաստատեցի զքարեկարգութիւնս միալ վասն նոցա. զոր ատելեսցեն զսխալն իմ եւ նենգեսցեն՝ անցանելով զպատուիրանաւ իմով, այնպիսիքն կրծանեն զսխալն Աստուածոյն եւ արժանի լինին մշանջենաւոր պատժոյ:

Թագաւոր կամ այլ զոր յապրէն Մուսլիմանոց կամ բարեկրօնիչ՝ ըստ նութեամբ զբրիստոնեայս մի պատճառեսցեն ի կրօնս Մուսլիմանոց եւ մի վհատեսցեն ընդ նոսա ի վերայ իրացն հաւատոյ, եթէ ոչ քաղցրութեամբ եւ հանդարտութեամբ պահեսցեն զնոսա ընդ հովանեաւ ողորմածութեան իւրեանց, փրկելով զնոսա յամենայն տառապանաց եւ ի վշտաց. ուր ուրիք երեւեսցին եւ բնակեսցին նոքա: Եւ եթէ ազգն նոցա հպատակեալ՝ կարօտասցի ընչից վասն չինութեան եկեղեցեաց. մենատանոց քաղաքական խոչդրոց. վասն գաւառաց եւ տանց իւրեանց, Մուսլիմանք պարտին օգնել նոցա եւ այլ առնել. տալով նոցա մասն ինչ յանժառանգ ընչից, եւ այն եւս ոչ ըստ կերպի պարտուց, այլ ըստ կերպի ողորմութեան. եւ տացեն նոցա խորհուրդ բարի ի գործառնութիւնս նոցա, զի այն է հաճոյ առաջի Աստուծոյ եւ առաջի մարդարէի նորին: Ի՛կ եթէ օք ներհակեսցէ եւ այլայլեսցէ զայս ուխտ իմ. այնպիսին անհաւատ է եւ ապստամբ լինի Աստուածոյին մարդարէին եւ զկենդանի յարդեանց նոցա. եւ մարգարէն ընդ նա ոչ հաճեցի. զի օրք ոչ լցեն հաւատարիմք եւ հնազանդք ուխտիս զոր հաստատեալ է իմ, այնպիսիքն զիաթդ լինին հնազանդք Սրբոյն Սրբոց որպէսզի Ա պիթալէպպ փառաւորելոյն. քանզի զոր ինչ նա կարգաւորեալ է՝ պարտական նութիւն Մխալիմանոց է կատարել. այլ առնելով նոցա եւ ողորմիլ նոցա յամենայն ժամանակ՝ որքան տեւեսցէ աշխարհ մինչեւ ի կատարած աշխարհի: Եւ փառք Աստուծոյն յաւիտեանս:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ

> « Սիրեցէք զմիմեանս, ասէ Քրիստոս, և այսու ծանիջիք թէ աշակերտք իմ էք » :

Մեր հաստատելիք սահմանմունքն բաւական են մարդկային սեռի կրօնին. սիրելիք այս կրօնին տաճարն է, ուր ամեն պաշտամունքներ ընդունուած են, ուր պէս պէս ծէսերուն ընտանի արարողութեանց ամեն ժողովրդոց հաւատոյ եւ վարդապետութեան մէջէն Աւետարանը իւր կենդանի նշոյլները կը ճառագայթէ:

Վարդապետութեան մէջ միութիւնը՝ մարդկային զարմին յառաջադիմութեան ճամբով փառասիրութիւնն է միայն: Բարոյականին մէջ միութիւնը երկրիս վերայ եղող բոլոր ժողովրդոց խաղաղասէր քաղաքակրթութիւնն է: Ուրեմն Տիեզերական կրօնք մը հիմնելու գաղափարին մէջ բնաւ պատճառ մը չը

կայ, վասն զի պաշտամունք մը, վարդապետութիւն մը չէ, այլ Աստուածային մարդոց սէրն է, այս երկնային բարոյականի գործովը ամէն հաւատացեալք գտնէը Յիսուսի Քրիստոսի աշխարհ մը ընծայել էր։ Յիսուս Քրիստոս, մարդիկ միմիայն պաշտամանց մէջ ժողովելու չէ եկած, այլ միայն Աստուծոյ առջեւ՝ ըստ իւր երկրպագելի բանին, «Ձաղմութեի կամիմ և ոչ զզոհս»։ Եւ ով որ Աստուած կը սիրէ իբրեւ հայր և մարդիկ իբրեւ եղբայր, ով որ Քրիստոսի ձեռք կը կպկպուի, և իր հալածողները կ'օրհնէ, հեթանոս ընկայ հերձուածող ըլլայ, կրնայ Քրիստոսի հաշակերտ անուանիլ. ահաւասիկ Քրիստոսի աշխարհը քաղաքակրթելու համար Աւետարանը գրուած է, նա տաճարները չպիտի կործանէ, այլ մարդիկ պիտի ամբէ, հաւատացեալները զպիտի հարուածէ, այլ ազգոյ խորհուրդ մը պիտի տայ։ Միայն չանայէք որ իր բարոյականը բարբարոսացած օրերին մէջ թափանցի, պիտի տեսնէք նոյն հետայն բազմահնութեան, ներքինացման, ցեղի, դերասնութեան և բռնակալութեան, որ մարդոց նախատինքն է, և մեղուանդութեան, որ տակաւին ապիտութիւնն է, բարձրանան և չինջնան։ Եթէ այս ամէն գարշելութիւնք ընջուած ըլլան, այն ատեն կը ռապաշաք Քրիստոսի դառնան։

Քրիստոնեայ։

Եւ Յիսուսի Քրիստոսի բոլոր խորհուրդը հոս կը կայանայ, եթէ ուղէր կրօնք մը ստեղծել, Մովսէսին պէս կը սկսէր վարդապետութիւնք ձէս և արարողութիւնք սորվեցնել ժողովուրդ հարուածող միակ իրեր։

Արդ, Աւետարանը բարոյականի մը օրինագիրք մ՚ է և ոչ Մաշտոց, ջրկոյ բնաւ պաշտամունք եւ ոչ մին մեր գաղանախորհուրդներէն յայտնուած։ Ինչու՞, վասն զի Քրիստոս կրօնք հիմ նելու համար չէ եկած, այլ կանոնաւորելու։ Զրպարտեցէք, իր ուսուցմունքն որչափ որ կ'ուզէք, նա երբէք բան մը չըսաւ որ կարենայ հաւատարանութիւն մը շղթամել, աղանդ մը հաստատել կամ ազգերը բաժանել։ Իր վարդապետութիւնք ամէն կլիմայի կը պատկանի, մարդկային ազգը կ'ընդգրկէ, նա որ և է հաւատալիք մը չը պարտաւոր, որ և է կառավարութիւն մը չը քննադատեր, այլ իր բարոյականը կը հիմնէ, և ամէն մարդիկ՝ ի սէր Աստուծոյ եւ ընկերին կը հրաւիրէ, մարդկութեան վերայ ծանրացող ամէն չարեաց միակ դարման եղող սիրոյն ակնկալելով, ինքը փոխելու վրայ բնաւ չը խօսիր, այլ ամէն ինչ իրմով փոխելոյ։

Ամենէն ազգու դիտողութիւն ընելու համար միայն մէկ գործ՝ գերութիւն յառաջ բերինք, ատեն մը մարդը վաճառք մի էր և իբրեւ գրաստ՝ ի վաճառատուն կը տարուէր։ Յիսուս Քրիստոս միայն այս դժոխային չահագիտութեան դէմ որոտաց, թէ ազգերը բարբարոսութենէ քաղ պատուելու հրաւիրէր, առանց հասկնալու անոր մութ ըրին, սովորութիւնը ընդհանուր էր, կարողութիւնը զանի իրաւանց վերածած էր, զարմանալի բան, Աստուած մեզքին վրայ կը լռէ, բայց մարդկային սեւին հանուր եղբայրութիւն մը կը հաստատէ. «ԹՈՒՔ ԱՄԵՆԵՔԻՆ ՆՂԲԱՐՔ ԷՔ»։ որչափ որ այս ճշմարտութեան ոտին քաղաքակրթեալ աշխարհին ըղգալի կ'ըլլար, այնչափ գերութիւնն ա ներեւոյթ կ'ըլլար։ Մեծամեծ յեղափոխութիւնները միայն մեծամեծ ճշմարտութեանց լուսով տեղի կ'ունենան։

Ուրեմն Յիսուսէ Քրիստոսէ գծուած ընթացքը մէկ հատիկ է, որ աշ

հոգին վերանորոգելու կարող կ'ըլլայ, պէտք է սկզբունքը հաստատել առանց նախապաշարմունքը հոգուածելու, ուրն պաշտպան է ժողովուրդը, այլ ապահել ժամանակին և Տիեզերական քանին։ Ձգմարտութիւնը յամր և առանձնաբար առաքելութիւնը կը կնքէ, ինչպէս արշալոյսը խաւարը։ Յետին պատուհասը մը և կը վերջացնեմ։ բարբարոս Աբեւմուտքը բարոյականը ընդունելէն առաջ վարդապետութիւնը ընդունեց, երկար ատեն ալ բարբարոս մնաց։ Այսօր իր ճակատագիրը փոխուած է եւ պէտք է ըսել թէ Աւետարանին փիլիսոփայական լուսով քաղաքակրթութեան եւ աղատութեան հասաւ։

Փորձառութենէն օգուտ քաղենք, և Աւետարանին ամենաճշմարիտ հոգին երկրագնդին զգացնել կու տայ իբրեւ առաքեալ և անուշ հողմիկ, որ Արեւմուտքէն Արեւելք կը հնչէ կենսատու անձրեւ մը, որ երաշտ երկրին արգասաւորութիւն և վերակենդանութիւն կը պարգեւէ։

Օ՜ն ուրեմն, Աւետարանին ոգին Թող մեր առաջնորդն ըլլայ և ոչ ծէս և արարողութիւն, որ աղգայ բաժանման կուտայ և տարբերութեան նիւթ են գործեր սոսկապէս։ Աւետարանը սիրոյ և միութեան միակ ձուլարանն է, եւ անդ պէտք է յանգի մեր խղճը և հոգին և անդ է միայն մեր սրտին անհատնում։

Էմմէ Մարլէն Թարգ.
Զաւար Մ. Համբարձումեան,
Ո–խաւոր։ Երուսաղէմ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԴՕԹԱՅԻՑ

Այս անգամ մեր ընթերցողաց ուշադրութիւնը գարձնում ենք մեզայս վարժուհեաց սեմինարի վերայ։ Մեր անձնական հայեացքներն այս առումնարանի մասին յայտ ունենք ուրիշ ժամանակ մանրամասնօրէն յայտնել ընթերցող հասարակութեան, առայժմ կամենում ենք ծանօթացնել մեր Հայ կանանց այս ուսումնարանի ծրագրին։ Համարձակ կարող ենք ներկայացնել այս հիմնարկութիւնը իբրեւ բաւական օգտաւէտ այն մտածող կանանց և օրիորդներին, որոնք կամենում են ստանալ եւրոպական հասակի կանոնաւոր կրթութիւնը։ Մեզ համար նմանապէս մեծ նշանակութիւն ունի այն բանը, որ այս Սեմինարի Դիրեկտոր Պ. Ա. Կէօհլերը աշխատում է ամենայն միջոց և յարմարութիւնք մատակարարել օտարազգի կանանց իբր ուսումնարանից դանազան կողմից օգուտ քաղելու։ Ա՛ս այժմ օտարազգիներից այս Սեմինարիայում կան մի Անգլիացուհի, երեք Ռուս օրիորդներ, որոնցից երկուսը Պետերբուրգից են, իսկ մեկը Կիշենեվից, երեք օրիորդ Ռումինիայի կառավարութիւնից այստեղ ուղարկած վարժապետութիւն ստանալու։ մեկ Հունգարացի օրիորդ, երկու Հայ կանայք և մեկ Հայ օրիորդ։ այս վերջինը ուսումնարանում գիշերօթիկ է։ վերջերում այստեղ եկաւ և մի Վրացի օրիորդ։

Գօթայի վարժուհիների Սեմինարի նպատակն է աղջկերանց փորը հասարակից մինչեւ հասունը այնպիսի կրթութիւն տալ, որ համապատասխանէ նոր

Գօթայի վարժուհեաց Սեմինարը
(Տեմարանը) և նորա բաժինները։

ժամանակիս և այժմեան մանկավարժութեան պահանջներին։ Սորա աշակերտուհիք պէտք է ոչ միայն ընդհանուր ուսումնարանական կրթութիւն ունենան, այլ և խիստ կանոնաւոր գործունէութեան մէջ ջանա գիտութիւն և ճարպիկութիւն առնեն, որպէս զի նոքա իւրեանց ինչպէս ընդհանուր, նոյնպէս մանաւանդ կոչման համար, բոլորովին պատրաստուած լինեն։ Ա. յատկապէս ասել, նոքա այնպէս պէտք է կրթուին, որ ոչ միայն հասարակ մարդիկ կանայք, լաւ տանտիկիններ եւ իւրեանց որդւոց համար հասկացող մայրեր դառնան, այլ և եթէ նոքա զկուսած լինեն որ և իցէ պատճառով այդ բնական կոչման կատարութիւից, կեանքի միւս հանգամանքներում կարողանան իւրեանց համար գործունէութիւն գտնել և իւրեանց կեանքը բաղդաւոր կացուցանել։

Ա. յս հիմնարկութիւնը մատչելի է ամեն մի դասի աղջկանց համար։ Մի և նոյն ժամանակ պէտք է նկատել, որ ուսումնարանն ունենալով, այդպիսի բարձր նպատակ ուշք չէ դարձնում (ազնիւ) կրթութեան վերայ։

Զանազան հասակի և զարգացման համեմատ հետեւեալ կերպով է բաժանւում Կէօլերի Սեմինարը։

Ա. Մանկական պարտէզ։

Մանկական պարտէզը բաժանւում է երկու դասատուն, որոնցից ամեն մէկը պարապմանց համեմատ երեք բաժին ունի։ Մանկական պարտէզի հիմնոց մասին մենք նեղքեւ մանրամասնաբար պէտք է խօսենք։

Բ. Օրիորդ, նոր ուսումնարան չորս դասատուն։

Օրիորդական նոր ուսումնարանը դալիս է անմիջապէս մանկական պարտէզից յետոյ, այստեղ սկսում է ուսումը և վերջանում է բարձր պատրաստական դասատնով։ Օրիորդաց նոր ուսումնարանում դաս է տրւում — Կրօն, Գերմաներէն լեզու (կարդալ, գրել, շարադրութիւն, վարժ ընթերցանութիւն, պատմել, գրականութիւն)։ Գաղղիերէն լեզու, թուաբանութիւն, երկրաչափութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, բնագիտութիւն, նկարչութիւն, երգեցողութիւն, ձեռագործութիւն։

Ա. (Ա. յս դասատները մտնում են երեխայք 6 տարեկան հասակից, բ.) բայլ մանկական պարտէզը յաճախող երեխանց՝ ընդունւում են այստեղ և ընտանեքում լաւ կրթուած երեխայք, գ.) ընդունելութիւնը տարին մէկ անգամ է. այն էլ՝ Յունկից յետոյ։ 6—14 տարեկան ուրիշ ուսումնարանում կամ տանը պատրաստած աղջիկն ընդունւում է ամեն ժամանակ հարցաքննութեամբ, դ.) ընդունելութեան ժամանակ պահանջում են մկրտութեան և ծաղկահատման վկայական։

Գ. Բարձր պատրաստական դասատուն։

Ա. յս դասատունն ունի այն նպատակը, որ շարունակէ հիմնաւորապէս Օրիորդական ուսումնարանի պիտութիւնները և պատրաստէ աղջկերանց երկու բարձր մասնաւոր դասատների համար։

Վերոյիշեալ առարկաներին աւելանում են այստեղ — մայրերի համար դաստիարակութիւն, անատոմագիտութիւն, հաշուեպահութիւն, խոհանոցի ֆիզիքա և քիմիա։ Ա. յստեղ ընդունւում են օրիորդներ 14 տարեկան հասակից։ Միւս տեղերի աղջկերքը կարող են այստեղ մտնել իւրեանց ընդհանուր ուսման պահասորդը լրացնե-

լու համար : Ա յս դասատան մէջ կա րելի է և միայն առանձին առարկաներ լսել, օրինակ հաշուեպահութիւն, տո նարարութիւն, տնտեսութիւն եւ մարդագիտութիւն :

Գ . Մանկական պարտիզպանութեան Բեմինար :

Ա յս դասատունը մանաւոր է նո ցա համար, որոնք իւրեանց կեանքի նպատակ են գրել ընտանեկան կամ հասարակական Մանկական պարտէզ կառավարելու կամ վարժուհեայ դա սատուն մնալու :

Բարձր պատրաստական դասատու նին անցած կամ նոցա չափ գիտցող ները, 16-ից ոչ պակաս օրիորդներ կա րող են այստեղ մտնել : Ուսումը շա րունակվում է մի ամբողջ տարի : Ա յս տեղ ուսումն աւարտած եւ հարցա քննութիւնը տուած օրիորդը ստա նում է վկայական, որով ունի իրա ւունք Մանկական պարտէզ հիմնելու : Ա յս դասատան առարկաները են՝ Կր թոն, ընդհանուր մանկավարժութիւն, Մանկական պարտէզի գործնական և տեսական գիտութիւնը], Ֆրէօբելի ձեռագործութիւնները, Մանկական պարտէզում փորձնական դաս և նորա քննութիւնը Մանկական պարտէզի յաճախումն, Գերմանական, Ֆրանսի ական և Անգլիական լեզուներ, Թուա բանութիւն, պատմութիւն, աշխար հագրութիւն, երգեցողութիւն :

Ե . Վարժուհեայ Բեմինար :

Ա յս առաջին դասատան գլխաւոր նպատակն է Գօթայի դքսութեան ժո ղովրդական ուսումնարանների համար վարժուհիներ պատրաստել : Ա յս դա սատունը կարող են մտնել միայն այն օրիորդները, որոնք աւարտել են երկ րորդ դասատունը և ստացել են ման կական պարապմունքներից վկայական :

Ա յս տեղ աւարտած սկզբնական վարժուհին պէտք է անպատճառ մի և նոյն ժամանակ մանկական պարտիզ պանուհի լինի :

Ուսումը շարունակվում է մէկ ամ բողջ տարի : Ա յս տեղ բացի վերոյիշ եալ առարկաները՝ գլխաւոր ուշադ րութիւնը դարձնվում է դասատուու թեան եղանակագրութեան (մեթոդի կայ) և փորձնական դասերի վերայ փոքր դասատներում : Հարցաքննու թիւնը տուած իւր վկայականի հիման վերայ՝ օրիորդն ունի իրաւունք ամեն մի սկզբնական ուսումնարան մտնել, ինչպես վարժուհի : Իսկ ինքը Բեմի նարիայի կառավարութիւնը ուրախու թեամբ կ՚առաջարկէ այդպիսի մի վկայական ունեցող օրիորդին ամեն մի մանաւոր, կառավարչական և արուա ստհմանեան ուսումնարանին իբրեւ վարժուհի և մանկական պարտիզպա նուհի :

Պանսիոնատ (դիշէրթեակը) :

Ա յս հիմնարկութիւնը դտանվում է քաղաքի ամենալաւ փողոցի վերայ և շքեղապատած է գեղեցիկ այգիով :

Բոլոր վերին յարկը նշանակած է այլ քաղաքներից եկած օրիորդների կա ցութեան համար : Ամեն մի սենեա կում՝ նայելով նորա մեծութեան, բը նակվում են երկուսից մինչեւ երեք օրիորդ : Առանձին սենեակ ունենալ ցանկացողի հետ կատվում է առան ձին պայման : Ա յս տեղ բնակող ա շակերտուհեայ համար կայ նմանապէս մի առանձին ընդհանուր մեծ սենեակ, ուր նոքա կարող են պարապել մինչեւ դիշերուայ 10 ժամը : Հաստատութիւ նը տալիս է իւր Թագաւոր որներին այն չափ ազատութիւն, որքան մի բարե

կրկին գերդաստանը տալիս է իւր որդւոյ : 6–14 տարեկան աղջկերք չեն ընդունվում պանսիոնում, բայց ցանկացողները այնու ամենայնիւ պէտք է գիմեն կառավարչին. այս վերջինը պատրաստ է նմանապէս այն օտար օրիորդներուն կամ կանոնց համար, որք ցանկանում են մանչաւոր վարժուհեաց դասատներըը յաճախել եւ պանսիոնի գինը իւրեանց կարողութիւնից վեր է, պահել արժան լինակատան :

Տիկին Ս. Բ.
(Մեղու Հայաստանի) :

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ՏԷՐՈՅԵՆՑ ՊԱՏՈՒԵԼԻՈՅՆ

Արժանապատիւ Խմբագիր Սիօն պարբերականիս

Կը յուսամ որ այս անգամ եւս կը բարեհաճիք հրատարակել առ Տէրոյենց էֆենտի գրած սոյն յօդուածս, որ պատասխան է Հայրենիքի 225 թիւս մէջ իւր հրատարակած յօդուածոյն : Սորա յապաղման պատճառը՝ արդէն գիտէք, որ իմ բացակայութիւնս և Հայրենիք լապտրոյն ուշ ձեռքս հասնիլն եղած է :

Տէրոյենց Պատուելին իմ նախորդ յօդուածիս երկարութենէն ձանձրացած լինելով, այս անգամ խիստ համառօտ կը գրեմ. բայց չը գիտեմ թէ երկարէն հասկանալ չուզողը՝ կարճով պիտի կամ՞ հասկանալ :

Տէրոյենց Պատուելին մեր խօսքերն անպատուելու համար՝ զոյն պանդոխտին ոճ կ'անուանէ. սակայն մեք պանդոխտներս մէջ կեցած չըմնինք. ուստի և այն տեղն ոճերը մեզ անծանօթ են . . . :

Յաճախակի ոճեր եւ լեզուներ քննադատող Պատուելին՝ երանի թէ սակաւ մի իւր ոճոյն վերայ եւս ուշադրութիւն դարձնէր, զոր հարկ չի մեք համարիր այժմ քննադատելու . . . . , և կը յայտնենք միանգամայն, թէ մինչ որ խօսեցանք ու կը խօսինք, քնաւ ա նօգուտ վէճի եւ հակառակութեան համար չէ, այլ ճշմարտութեան և օգտի համար. իսկ եթէ սակաւ մինչ խիստ լեզու գործածեցինք, դարձ պատճառ տուաւ նա մինչն Տէրոյենց Պատուելին, որ չուզելով սկիզբն խոստովանել իւր սխալմունքը՝ (եթէ սխալանք էր և ոչ կամակորութիւն) յայտնի ճշմարտութիւն մի խեղաթիւրել ձգնեցաւ :

Ես այս անգամ շնորհակալ պիտի լինիմ Տէրոյենց Պատուելին, որ վերջապէս կերպիւ մը խոստովանած է թէ իւր յիշած ժողովը Տիեզերական չէ : Մինչ պէս մեր արդէն յաճախ կրկնութենէն ամեն մարդ հասկացած է, որ մեր պահանջն ալ այս էր. և այժմ որ ինքը կը խոստովանի թէ նոյն ժողովը Տիեզերական չէ, այլ ինքը կաթոլիկով և մահմետականով Տիեզերական ըսած է, ալ մեզ հարկ չի մնար նորէն կրկնել եւ ցոյց տալ թէ ինչն ինչպէս աշխատեցաւ Տիեզերական լինելն հաստատել. չեմք ուզեր կ'ըսեմ նորէն յառաջ բերել այն խաբեութիւններն, հակասութիւններն ու վախճուսանելը, որք իւր յօդուածոյ մէջ կը վկատան. վասն զի մեք հակառակասիրութեամբ վարուած չեմք, այլ ճշմարտասիրութեամբ :

Ա՜հա Տէրոյենցի բուն խօսքերը կ'դնեմք հոս, որպէս զի չըկարծուի թէ կըզըպարաեմք. " Ես, կ'ըսէ Տէրոյենց, այս նախընթաց ժողովները Տիեզերական-լուսած տեսակէն կարծելով, նոյն անունը տուեր եմ" : Ա՜յս է Պատուելիին խոստովանութիւնը՝ զոր խիստ կանուխ կարող էր ընել, եթէ կարճ խօսիլ կը սիրէր և եթէ գաղանի նպատակ մը չունէր. բայց մեզ հարկ չէ նորէն քննութեան մտնել . . . . :

Արդ՝ մեք այն պատասխանը լսեցինք և գոհ լինելով, կը յայտարարեմք, որ մեք Պատուելւոյն հետ ունիշ գործ մը չունինք. Թէպէտ ինքն մի քանի հարցմունք և առաջարկութիւններ կ'ընէ. բայց մեք նոցա պատասխանները՝ մեր արդէն խօսացներէն զատ իբր գիտնական հաշակուած գլխոյն և իբր նոր աթոռնցած խղճմտանքին կը ձգեմք. և քաջարձակապէս կ'ըսեմք, որ այդպիսի նիւթոց վերայ մեզ հարցումներ չեն պիտի ընեն. վասն զի չը պիտի պատասխանենք և վասն զի նոցա պատասխաններն արդէն տրուած և ճշդիւ մարիա Հայերուս և ճշմարիտ Քրիստոնեաներուս հոգեշունչ խօսքերովը մեր ժուռած լինցած են, զոր ինքը քաջ գիտէ, և գործեալ կը գրկեմք վինքը դէպ՝ի պատմութեանց էջերը, ուր պիտի տեսնէ թէ ոչ միայն խօսքով և դրչով, այլ և հալածանօք, տարագրութեամբ եւ արեամբ իսկ պատասխանած են դոցա, և մեք չեմք կամիր արդէն վընաս եւ լռացած բան մը՝ առանց կարեւորա թեան խօսքի նիւթ ընել և վերստին վիճաբանութեան դուռ բանալ։

Սա ալ չը մոռնամք աւետել Տէրոյենց Պատուելւոյն, որ ինչպէս ինքը հաւատարիմ է Հռոմէական եկեղեցւոյն, թող գիտնայ, որ նորա եւս նոյնչափ հաւատարիմ են իրեն. քանզի՝ի շնորհս Տէրոյենց Պատուելւոյն Սեպտեմբերի Սիօն ամսաթերթը՝ Պապական միաբանութեան մը կողմանէ յետ դարձուեցաւ։ Ա.յս պատճառաւ մեք ալ այդպիսի նպատակաց ծառայողներու ամեն հարցմանց և առաջարկութեանց պատասխանելու պարտաւոր չեմք ճանչնար զմեզ, այլ ճշմարտութեան համար խօսացնիս և Պատուելւոյն այս վերջի խոստովանութիւնը բաւական համարելով, կը վերջացընեմք խօսքերնիս։

Մ. Վ. Պալիոեան։

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ

Յ.ԱՆՍ Եպիսկոպոս Տիգրանակերտցի, Միաբան Սրբոյ Ա.Թոռւոյս, կաթուածահար մահուամբ աւ. Տէր փոխեցաւ Յունվարի 27 ին՝ի սուգ համակելով բոլոր Միաբանութիւնն։

Կաթուածի սոսկալի հարուածէն ընդարմանալով՝ չը կարաց ամենևին խօսակից Միաբան Հարց և Եղբարց հետ։ Բժշկաց չանքն ու աշխատութիւնն՝ի դերեւ ելին, եւ մի ժամու մէջ կաթուածի հարուածն տարածեցաւ բոլոր մարմնոյն մէջ, անխօս և անբարբառ քանի մի ակնարկ ձգեց շուրջ պատեալ Հարց և Եղբարց վե-

րայ և իւր հոգին աւանդեց։

Անակնկալ մահէն ժամ մը առաջ ուրախ էր և զբաղիլ և նոյն օրն ճաշած էր քանի մի Միաբան Հարց հետ իւր սենեկին մէջ եւ պատրաստ էած զրոյցները։ Գոգլես Նախախնամութիւնն տնօրինած էր, որ վերջին աւուր մէջ յատկապէս ի ճաշ հրաւիրելով Հանգուցեալն իւր Միաբան եղբարց հետ։

Հանգուցեալն յուղարկաւորութիւնն կատարուեցաւ շքեղ հանդիսիւ, ի ներկայութեան Միաբան Հարց, Եղբարց, Ուխտաւորաց և բազմութիւն օտարականաց։ Օծման պատարագը Թիւնն կատարեց ինքնին Ս. Պատրիարքն արտաստուելով եւ յարտաստս շարժելով բոլոր հանդիսականներն։ Օծման պատարագութենէն ղկնի գամբանական խօսեցաւ Ս. Պատրիարքն, յայտնելով՝ որ հին Միաբաններէն մին է Հանգուցեալ Յակոբ Եպիսկոպոսն և իւր 58 ամեայ կենաց ընթացքի մեծագոյն մասն Ս. Աթոռոյս մէջ անցուցած է. Դպրութեան, Սարկաւագութեան և Վարդապետութեան աստիճանն Ս. Աթոռոյս մէջ առած է։ Եպիսկոպոսական կոչումն ալ ի Ս. Էջմիածին Մատթէոս Կաթողիկոսէն եւ վարած է Ս. Աթոռոյս մէջ զանազան պաշտօններ, այն է Գրագրութեան, Ս. Տեղեաց Տեսչութեան, Թարգմանութեան, Ժողովականի անդամութեան և այլն։ Հանգուցեալն Թաղուեցաւ Սուրբ Փրկչայ վանուց գաւթին մէջ, Գաւիթ Եպիսկոպոսի շիրմին մօտ, որ իւր հոգեւոր հայրն էր և որուն սպասաւորած էր երկար ժամանակ։

Այսպէս անկայուն է ահա մարդոյ երկրաւոր կեանքն, այսպէս անխնամելի է Աստուծոյ Նախախնամութիւնն։ Ուստի կը մնայ մեզ միայն օրհնել Աստուծոյ կամքն և հանգիստ ու երանութիւն մաղթել հանգուցելոյն։

ՏԽՈՒՐ ԴԷՊՔ ՄԸ

Ըստ Տնօրէնութեան Ս. Աթոռոյս Վարչութեան Աւժ. Խոշն վարդապետան Հայֆայ և Աբքեայ երթալով տեղւոյն քանի մի Հայազգի ընտանեաց հոգեւոր պիտոյից մատակարարութեան համար և վերադառնալով անտի հետեւեալ դէպքը կը հաղորդե Խմբագրութեանս։

«Քանի մը ամիս առաջ Կեսարիոյ Թալասէն Մահտեսի Կարապետ Աշըղ Թրապ մականուանեալ Հայազգին Աբքեայ երթալով Աշըղութիւն կ'ընէ. և ժամանակ մը վերջը կը հիւանդանայ. տեղւոյն մեր ազգայիններէն Յոհաննէս Մահտեսի Յովհաննէս ազան հիւանդանոյն տեսչին և զօրապետին կը դիմէ խնդրելով, որ հիւանդը զօրայ հիւանդանոցը փոխադրեն դարմանելու համար։ Նոքա եւս հրաման կ'ընեն անմիջապէս հիւանդը հան կը փոխադրուի և այսպէս եղած խնամքները կը տարուին։ Բայց Աշըղ Թրապի կենաց վախճանը հասած լինելով բժշկական դեղերը իրեն չօգնելով երկու ամիս Տէրութեան հիւանդանոցի մէջ պատսպարուելէն և խնամուելէն ղկնի, իւր մահկանացու կեանքը կը հնչէ։

Տեղւոյն զօրապետներէն Ահմատ պէյ և Իսմայիլ պէյ հաղարապետները լսեր կը զրկեն Հայազգի Յովհաննէս ազային թէ ձեր ազգէն մեր հիւանդանոցը պատսպարուող Աշըղ Թրապն վախճանեցաւ, եկէք վերցուցէք։ Անոր Յովհաննէս ազան Ակնցի Դուխանեան Դէորգ ազային կը դիմէ լսելով կը

ասոյ, և Գէորգ աղան կ'ըսէ, որովհետեւ մենք հոս Եկեղեցի և Եկեղեցական չունինք, Յունաց եկեղեցին գնայ քահանայ մը առ, և գնացէք վերցուցէք և պէտք եղած ծախսերը ես կը վճարեմ։

Յովհաննէս աղան կ'երթայ Յոյն քահանայ մը կ'առնու եւ գանուսալ հայերը, ու մի քանի հոգի ևս Յոյներէն կ'երթան ննջեցեալը վերցնելու։ Ա յն միջոցին երբ ննջեցեալը սիրոյ սենեակէն դուրս հանեն, վերոյիշեալ հաղարապետներն կուգան կ'ըսեն, (չմոռնանք տուրքուն իշ պաշկալաշատը) նաեւ Խտարէ մեհլիսի կողմէն մարդ մը կուգայ և կ'ըսէ, ննջեցեալը առ ժամս մի՛ վերցնէք և Յովհաննէս աղան ժողովին կը կանչեն, ուր որ բոլոր կային Եօղհաթցի Ա պտուլլահ էֆէնտին, եւ Ա.ք.քեացի Շէխ Ալի Մուֆթիին և կ'ըսեն վեց տաճիկ վկայներ կան որ ձեր հայը մեռնելէն քանի մի ժամ առաջ տաճկութիւնը ընդունած է, ուստի դուք չէք կրնար վերցնել, պէտք է որ մենք վերցունենք։

Կը պատասխանէ Յովհաննէս աղան թէ՝ մէ՛ ապացոյն տէրութիւնը օրէնք ունի, որ երբ մէկը կրօնափոխութեան դիմել ուզէ, նորա աղդին լուր կուտան և կուգան կը համոզեն, եթէ չը հաժողովի այն ժամանակ իւր ընտրած կը թանքին կը մնայ, դուք գիտէք որ մեռնողը Հայ է, ինչու մեզ լուր չտուիք, և կամ թէ երկու ժամ առաջ լուր տուիք թէ ձեր հայը մեռած է եկէք վերցուցէք այժմ ինչպէս կըսէք տաճիկ է։ Ա յս խօսքերը քնաւ ներգործութիւն չըրին, Մուֆթիին ապառնացան կերպով մը լաւ վեց տաճիկ վկայ կայ կայ, մեռնողը տաճիկ է, և տաճիկները սիրոյ Թաղեն, և վերջնական կերպով Հայերը կը մերժեն ընդ նմին Յոյն քահանան և յունարկուորութեան գնացող ժողովուրդը, և դագաղը կ'առնեն եւ կը գնան։ Եւ Տաճիկները Մուֆթիին հրամանաւ հիւանդանոց երթալով ինը ժամ առաջ մեռնող հայը կը թլփատեն և իրենց օրինաց համեմատ կը տանեն տաճկաց գերեզմանոցը կը Թաղեն։

Ա յս պարագայիս մէջ մենք կընամք խորհիլ Թէ աշըղ Թրապիի հայ մարդ երբ քանիմը մարդ ըսեն տաճիկ է, այս ըսելով նա տաճիկ եղած չըլլար։ Ա յսպէս ալ Հայ մեռնողը թլփատելով տաճիկ եղած չըլլար, վասն զի գերեզմանի քննութիւնը Ա.ք.քեացի Մուֆթիին չէ, որ որոշումը թլփատութեան և անթլփատութեան վրայ հիմն է, այլ Աստուծոյ է, որ բացարձակ գիտէ Թէ Աշըղ Թրապ Հայ է, Թէ տաճիկ։ Ա յսպէս Հայը տաճկի գերեզմանոցը Թաղելով տաճիկ եղած չըլլար, մինակ Թէ կը ցաւիմք, որ այսպիսի ժամանակի մէջ տակաւին գիշերային գործերը կը գործուին և տէրութեան ընդհ.քը չարաչար կը գործածուի, վասն զի տէրութեան հիւանդանոցի մէջ հայոց մը ննջումնելու մեծ շնորհքը չարաչար գործածեցին, երբ Հայոց անունն տաճկութեան փոխեցին »։

ԹԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Քանիցս հրատարակած ենք Մեծնի միջոցաւ Յունաց վանուց յունարէնին, որ սկսուած է Կիրիլոս նախկին Պատրիարքի հրաժարման օրէն։ Ա յս յունարէնն առանձին կերպով քաչքայած է վանուց միաբանութեան ներգաշնակութիւնն։ Գրեթէ Պատրիարքին շատ ձգձգող ժամանակի մէջ Պատրիարքական գահն բարձրացաւ։

վառն դի նախ ընդդիմադիր ունեցաւ Երուսաղէմի Յունապաւանի ժողովուրդն և ապա դրեթէ բոլոր ազգաբնակութիւնն : Ժողովրդեան կողմէն եկած հարուածներուն դիմացաւ անտարբեր համբերութեամբ , բայց Սիաբանութեան հարուածները անտանելի էին , ուստի և ստիպուեցաւ հրաժարական ղրկել առ Խարձրագոյն դուռն , իւր անտանելի կացութիւնն նկարագրելով : Խարձրագոյն դուռն ընդունած է իւր հրաժարականն և տեղւոյս Վ. սեմ . Ռդէվլի միջոցաւ ծանուցած է իրեն : Պրոքոպիոս այժմ Պատրիարքութենէն հրաժարելով իւր նախկին վանական սենեակն առանձնացած է և առ ժամանակեայ փոխանորդ կարգուած է Երէթհէմի Տէրոչ եպիսկոպոսն : Յունաց վանուց միաբանութիւնն սոսկալի անիշխանութեան մէջ է : Իւրաքանչիւր ոք Պատրիարքութեան կը ձգտի . յաղթումն ոչ Աբրիլոսի համար է և ոչ Պրոքոպիոսի , այլ քանի մի փառասէր եպիսկոպոսներ և վարդապետներ պատրիարքանալու բուռն բազձանքով Սիաբանութիւնն յուզեցին և կը յուզեն : Տեսնենք թէ ինչ վախճան պիտի ունենայ այն ցաւալի իրողութիւնն , որով ցայգ և ցերեկ կը յուզի Յունաց Միաբանութիւնն :

— Մեր Ս . Փրկչի վանուց նորոգութեան եւ գերեզմանատան խնդիրն նպաստաւոր ընթացիկ մէջ է : Յուսալի է որ շուտով լուծումն կ'ըստանայ այն խնդիրն համաձայն իրաւանց և արդարութեան և Ս . Անաղարեան կ'ազատի այն ահաբեկ ունեցած տեւական տագնապէն :

— Ներկայ ամսոյս մէջ ձիւնախառն անձրեւներ գրեթէ անպակաս են Երուսաղէմի մէջ և ցուրտն խիստ սաստիկ է , սակայն տեղական ժողովուրդն գոհ է և կը յուսայ առատ հունձ ունենալ յաջորդ տարւոյն մէջ :

— Ազգահարն , որ Երուսաղէմի անձրեւաց առատութեան անձրեւաչափն կը համարուի , ամսոյս մէջ սկսաւ լնանիլ և յորդիլ : Այն հարց լցուիլն անձրեւաց ժամանակ մեծ ուրախութիւն է քնակչաց , այնպէս որ , երբ հորն կը լցուի , բաժակներով ջուր կ'առնուն և իրրեւ ուրախութեան նշան կըտանին կը մատուցանեն փաշային , Պատրիարքաց և այլ մեծամեծաց . վասն զի ջրհարց յորդումն նշան կը համարին առատ հնձոց :

	Դր.	Փղ.
Հիդելբէն Լաշտրատիր. Տպեալ 1869.		30
Հինբիկոս եւ Մարիամ. Տպեալ 1870.	2	20
Հրահանգ սիրոյ, դարձ Մաղեղան Յովսէփ վարժապետի. Տպ. 1870.	2	
Ղևրուքնա Եղեռացի, եւ Եսայի կաթողիկոս Աղուանից. Տպեալ 1868.	3	
Ձաշոց դիրք. Տպեալ 1873.	300	
Ճառ հաղորդութեան. Տպեալ 1860.	4	
Ճառ դպրոցական. երկու վաքր տետրակներ. Տպեալ 1863 եւ միւսը՝ 1867.		30
Ճեբտատանութիւն առ Ձիւն. աշխատասիրեաց Եղիազար Մուրատեան.	3	
Մատենադրութիւն նախնեաց. Տպեալ 1856.	6	
Մատթէոս Ռուհայեցի, դարձ նախնեաց ժԲ դարու. Տպեալ 1869.	14	
Մեկնութիւն Եկեղացւոց. Տպեալ 1850.	25	
Մեկնութիւն յայտնութեան. Ներսէսի Լամբրոնացւոյ. Տպեալ 1855.	10	
Մխոյկի Ասուծոյ ժամանակագրութիւն, դարձ ԺԲ դար. Տպեալ 1871.	16	
—Նոյնը՝ ուրիշ դրչագրով բաղդատուած վաքր ինչ տարբերութեամբ.	12	
Յովհաննէս կաթողիկոս, պատմութիւն Հայոց, դարձ հանճնաց Թ. դարու.	10	
Յովհէլի Դեղեցիկ. Տպեալ 1849.	10	
Նարեկ. ոտանաւորաց Ս. Հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ. Տպ. 1868.	12	
Նոր ընդհարպատան, Տպեալ 1868.	5	
Ողբերգութիւն ի մեծն Ներսէս, Տպեալ 1863.	4	
Ովհաս Հայրենասիրի. Բ. Տպ. 1874.	4	
Ոսոցմն բառից. Տպեալ 1857.	18	
Ոսոցմն տրամաբանութեան, Տպեալ 1869.	3	
Պատմութիւն Ս. Գրոց. Տպեալ 1867.	8	
Պատմութիւն նոր կտակարանի, Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Ս. Երուսաղէմի, քաղուածոյ ի պարսկատառ թարգմանութեամբ. Տպ. 1872.	5	
Պատմութիւն Երուսաղէմի. ազգատոհմիւրեաց Յարեն վարդապետ. (**)	8	
Պատմութիւն Ս. Լուսաւորչի. Տպեալ 1867.	4	
Պատմութիւն Լենկթեմուրայ. Տպեալ 1873.	10	
Պատմութիւն Հայոց. Տպեալ 1870.	6	
Պատմութիւն բարոյական. Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Հայաստանեայց, առաքելական Ս. Եկեղեցւոյ. Տպեալ 1872.	16	
Պատմութիւն երկամեայ պատերազմութեան ի Հռոպէաստան, Տպեալ 1871.	20	
—Նոյնը՝ Գաղղիարէն լեզուաւ.	20	
Սաղմոս խոշորագիր, այլ եւ այլ անդամ տպուած.	10	
—Նոյնը՝ մեծ դիրքով	6	
—Նոյնը միջակ՝ դպրոցներու համար. Տպեալ 1873.	6	
Նոյնը՝ վաքր դիրքով եւ մանր գրով.	3	
Սիոն օրագիր, կազմեալ 1866 էն մինչեւ 1873. ազգարհիկ լեզուաւ.	40	
Սոդոմագրութիւն Երուսաղէմի, Տպեալ 1859. (**)	4	
Վարժութիւն փոխադարձ մանկանց. Տպեալ 1868.	6	
Տանվիլ տեղագրութիւն Երուսաղէմի. Տպեալ 1855. (*)	3	
Տարերք խնամասիրութեան, Տպեալ 1852. (*)	6	
Տիեզերութիւն հովուական. Տպեալ 1856. (*)	8	
Տրամաբանութիւն, Պատուելի Գրիգորի փիլիսոփայեան. Տպեալ 1855. (*)	18	
Տօնացոյց. Տպեալ 1868.	10	
Փիլիսան, հին ոճով. Տպեալ 1872.		20
Փերսական Գաղղիերէն լեզուի. Տպեալ 1871.	2	20
Փերսականութիւն Հայերէն լեզուի. Տպեալ 1870.	4	
Փերսականութիւն Գաղղիերէն լեզուի. Տպեալ 1869.	3	
Քրիստոնէական Համառօտ, Հայերէն եւ Ասորերէն լեզուաւ, Տպ. 1870.	2	
Օրացոյց եւ դուրսկութիւնք տղոց.	1	

ՅԱՆԿ

ՓԵՏՐՎԱՐ

Տեն նահատակութեան Սրբոյ Վարդանանց և հանդէս Յոտնդատաւորաց վարժարանին . . 25–31
Պատմական յիշատակարան 32–37
Հրովարտակ Աւելի 37–39
Վարդապետութիւն և բարոյական 39–41
Տեղեկութիւնք Գօղթայից 41–44
Յոտնտվանութիւն Տէրոյենց Պատուելոյն . . . 44–45
Մահաղուցակ 45–46
Տխուր դէպք մը 46–47
Ժամանակագրականք 47–48

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա. Սիոնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երես բաղկացեալ մի հատիկ ութածալ թղթով։

Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիէ, հանդերձ ձանապարհի ծախքովը կանխիկ վճարելի։

Գ. Ջատ սեփական առնել ուզողը, պէտք է ամէն մէկ սեփին չորս դահեկան վճարէ։